Կամիմ այսուհետև փոխել զիս յայլ մարդ. մերկանալ զհին մարդն. և զգենուլ զնորն ։ Անիծեալք լիջիք ով մեղք ։ Անիծեցեալ լիջիս ով սատանայ. որք էք պատճառք տանջանաց դժոխոց. և զրկէք զիս 'ի գեղեցկագոյն երեսացն տեառն իմոյ ։ Հեռացարուք յինէն ով ցանկութիւնք մարմնոյ և հեշտութիւնք աշխարհի որք թէպէտ մինչև ցայժմ խաբեցիք զիս. այսուհետև այլ ոչ ևս կարէք խաբել. զի տեսի զդժոխսն. և իմացայ զտանջանս նոցա ։

## Ընծայաբերութիւն.

Շնորհակալ լեր զայս ով տէր տուելոյ քեզ զբարիս խորհրդոց. և զառաջադրութիւնս ։

Աղաչեմ զնա զի օգնեսցէ քեզ. տու՛ր ի գործս կատարել զառաջադրութիւն քո.

Սատոյ ինձ զհոգի և զմարմինս. հանդերձ համայնիւք առաջադրութեամբք և բարեօք խորհրդովք. զորսնեը մտածականութենէն սրտի քում յղացայ։

## Աղօթք.

Ով կատարեալ արուեստագէտ. ով բրուտ երկնային։ Ես ողորմելի ՚ի տղմոյ եղեալս. գողալով և սարսափելով. առ աթոռս մեծութեանդ քոյ մերձենամ. Ծանուցեմ և խոստովանիմ զանկարութիւն իմ. Գիտեմ ինը զի ոչ եմ, և մանաւանդ այլ ոչ ինչ եմ առաջի քո. եթէ ոչ տիղմն հաստեալ. Թարց շնորհաց և օգնականութեան քոյ։ Առանց քեզ զոչ ինչ բարի խորհիմ. Թարց քեզ զոչ ինչ բարի խօսիմ. Թարց քեզ ոչ ինչ բարի առնեմ, և Թարց քեզ փրկիլ ոչ կարեմ. Այլ. դու ես բրուտն և ես եմ կաւ. վասն որոյ ով դու կամիս թէ լիցեմ. զայնպիսի կարես զիս առնել. և կերպաւորել։ Եթէ զերանելիս զիս առնես. ցուցանես ինձ զողորմութիս քո. Իսկ եթէ լքես զիս յերեսաց քոց. յայնժամ ցուցանես ինձ զարդար դատաստանն քո։ ուստի զոր ինչ առնես. բարւոք առնես. վասն որոյ ոչ կարեմ

կարեմ ասել քեզ. թէ ընդ Տ՛ր արարեր այսպէս։ Արդ՝. քանզի փրկութիւն իմ՝ի քէնէ Տ՛ր, աղաչեմ զքեզ. զի զքո անարժան տիղմս. արասցես զանօթ արժանաւոր առ փառս որքայութեն, և մի՛ անպանոց դժոխոց։ Շարժեա՛ Տ՛ր իմ զկամս իմ առ հաւատն ճշմարիտ. առ յոյսն հաստատ և առ ողջախոհ և ն՛ք սէրն քո. ՚ի ձեռս որոց զերծեալ ՚ի դժոխոց առժամանել յերկնային խորանն կարիցեմ. և ընդ սրբոց քոց օրհնել զքեզ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Մտածութի՛ն վեցերորդ.
## Յաղագս երկնից արքայութե՛ն.

Յաւուրս այսմիկ մտածեա՛ զփառս երանեցելոց. որ՛ք զի այսու մտածմամբս շարժեցի կամք քո. առ ՚ի խոտել և արհամարհել զաշխարհս և փափագել արքայութե՛ն երկնից։

Արդ. առ ՚յիմանալ զէր իմն այսօրինակ մտածութենս. Է. Ն. իբրս պարտիս մտածել. այսինքն զգեղեցկութիւն տեղւոյն. զբնակիչս ն՛ր. զտեսութիւն նոյ. զփառս մարմնոց. և զլրութիւն ամենից բարեաց.

Նախ մտածեա՛ զպատուականութիւն տեղւոյն. և մանաւանդ զհիանալի մեծութիւն նր ։ Արդ. իւրաքանչիւր աստղ մի 'ի յերկինս. մեծագոյն է քան զբոլոր զերկիրս այս ։ Եւս կան աստեղք ոմանք որք մեծագունեղք են քան զայլ աստեղսն ։ Արդ այժմ համբարձ զաչս քո յերկինս և հայեաց առ այնքան բազմութիւն աստեղաց. և տես զայնքան դատարկ տեղիսն. որք անդ 'ի մէջ աստեղացն գտանին. և այսու 'իմա՛ թէ որ քան մեծ է տեղին այն ։

Բայց ո՞ կարէ լեզուաւ պատմել զգեղեցկութիւն նր. քանզի. եթէ ած է ստեղծ զերս այդքան հիանալիս. և զայդքան գեղեցիկս այսմիկ արտաաուաց վայրի. ապա՛ զորպիսիս ստեղծեալ իցէ յայնմիկ տեղւոջ. որ է աթոռ փառաց իւրոյ. տուն մեծութն իւրոյ. և բնակութն սրբոց իւրոց ։

Յետ գերազանցութն տեղւոյն մտածեա՛ զպատուականութիւն բնակողացն. որոց բազմութիւն և հարստութիւն գերազանցէ զհամայնիւք այնոքիւք. զորս մարդ խորհիլ կարէ ։ Ասէ նր յոհան աւետարանիչն. թէ այնքան մեծ է բազմութիւն սրբոց. մինչ զի ոչ ոք զնա թուել կարէ ։ Ասէ նըն Դիոնէսիոս արիսպագացին,

պատգամացին, թէ այնքան մեծէ թիւն հրեշ-
տակաց․ մինչ զի՝ գերազանցէ՛ զհամայն
իւր նիւթականօք ստեղծուածօք։ Եւ որն
թուոյս աքուինացին հաստատէ զայս և
ասէ։ Որպէս երկինքն մեծութեամբ իւրով գե-
րազանցէ զմեծութիւն երկրի․ որպէս և
բազմութիւն այնոցիկ հոգւոյն երանե-
լեաց․ անհրնաւէս գերազանցէ զբազ-
մութիւն համայնից ստեղծուածոց նիւթա-
կանացս․ որք աստ յաշխարհիս գտանին։

Արդ․ այլ ինչ քան զայս զարմանալի
կարէ գտանիլ իրաւի եթէ ոք բար-
ւոք խորհիցէ զայսմանէ․ ոչ կարէ կալ
թարց հիացման․ և առանց սոսկալոյ։
Արդ, եթէ իւրաքանչիւր ոք ևս փոքրա-
գոյն նոցին․ առաւել գեղեցկագոյն է
քան զբոլոր աշխարհս այս․ ապա որ-
քան գեղեցիկ պարտէ լինիլ տեսութիւն
՚ի միասին համայնից սրբոցն։ Արդ, եթէ
կենցաղավարիլն աստ ընդ բարեաց ա-
րանց այսչափ քաղցր է․ ապա որպիսի
քաղցրէ լինելոյ ուրախանալն անդ ընդ
հրեշտակաց․ ցնծալ ընդ հրեշտակապե-
տաց․ խնդալ ընդ իշխանութեանց․ բերկ-
րիլ ընդ կարողութեանց։ Տիրապետել ընդ
տէրութեանց․ ճառագայթել ընդ զօրու-
թեանց։ Պայծառանալ ընդ աթոռոց։
Ջմայլել ընդ քերովբէից։ Եւ բորբոքիլ

սիրովն

ահրոմն ձայ ընդ սերոբէից. խօսելն ընդ առաքելոց. ընձեռել ընդ մարգարէից. նա և հաղորդակցիլ ընդ մարտիրոսաց. և ընդ ամենից սրբոց.

Ու եա, եթէ այսքան քաղցրէ ընկերակցութիւն. և կենցաղաւարիլն ընդ սրբոց. ապա որ քան զուարճալի է լինելոց տեսութիւն. և զմայլումն ծայրագոյն բարւոյն այնորիկ. զոր գովեն աստեղքն առաւօտեան. որոյ ընդ գեղեցկութիւն զարմանան արեգակն և լուսինն, և ս յոտս անկեալք երկրպագանեն զօրութիւնք երկնայինք։ Ո՜վ հաճելի պարտէ լինիլ տեսութիւն ընդ հանրականի այնորիկ բարւոյն. յորում կան համայնք բարիք. որ և գոլով մի միայն. ամենայն է՝ ամ ինչ. Զարմացեալ Թագուհին սաբայ ընդ իմաստութիւն սողոմոնի աղաղակեաց ասելով. Երանի՛ որք կան առաջի քո. և վայելեն զիմաստութիւն քո. Ապա զինչ լինիցի տեսանելն զայն ծայրագոյն սողոմոնն. զայն անստեղծ իմաստութիւն. զայն անհուն մեծութիւն. և զայն անպատմելի գեղեցկութիւն. և զայն անչափ բարութի. և զմայլել նովաւ միշտ. Արդ, այս է գոյացական փառքն սրբոց. այս է վերջին վախճանն. և նաւահանգիստն ամենից ցանկութեանց մերոց.

Տես այսօրին մտածեա՛ զխաւս մար
Հոգւոյն սրբոյ. որք ունելոց են զայ
սոսիկ չորս եզականս պարգևս. այսինքն.
Զնրբութիւն. Զթեթևութիւն. Զանկրե
լութիւն, և Զպայծառութիւն. Եւ այս
պայծառութիւնս եղիցի այնքան մեծ.
մինչ զի իւրաքանչիւր ոք ճառագայթես
ցէ որպէս զարեգակն. Արդ. եթէ մի միայն
արեգակն որ կայ 'ի մէջ երկնից. բաւա
կանէ առ 'ի լուսաւորել. և ուրախացու
ցանել զբոլոր աշխարհս, ապա՛ զինչ
արասցեն այնքանք արեգակք և զամ
բարքն. Բայց զինչ ասասցեմ այլոց հա
մայնից բարեացն որք անդ գտանին.
Զի անդ եղիցի առողջութիւն թարց
տկարութեան. Ազատութիւն թարց ծա
ռայութեան. գեղեցկութիւն թարց տգեղու
թեան. Անմահութիւն թարց ապականութեան.
Առատութիւն թարց չքաւորութեան. Հան
գիստ թարց աշխատութեան. Խաղաղու
թիւն առանց խռովութեան. իմաստութիւն
առանց տգիտութեան. Յագումն առանց
տաղտկութեան. Ուրախութիւն թարց տրտ
մութեան. և Պատիւ առանց ընդ դիմու
թեան. Եւ այլն. որպէս ասէ սբն Օգոստի
նոս. Անդ եղիցի ճշմարիտ պատիւն, որ
ոչ բարձցի յարժանաւորաց. և ոչ տրի
անարժանից. Անդ փառքն սրբոց եղի

ցին

ցին նոյն ինքն ած տուօղն նշ զարքայու-
թեն ։ Զի եղեցի նշ հայր ողորմած .
մայր գթած . տր նախախնամիչ . և վար
դապետ ուսուցիչ . իսկ մեք տեսցեն
զնա թարց վախճանի ։ Սիրեսցեն թարց
տաղտկութե . և գովեսցեն զնա առանց
վաստակելոյ ։

Անդ տեղինե լայնատարած . գեղե
ցիկ . պայծառ . և ապահով . Ընկե
րակցութին քաղցր և համեղ ։
Անդ ժամանակ ոչ փոփոխի, այլ մի և
նոյնե կացութին նո ։ Ոչ բաժանի 'ի տիւ
և 'ի գիշեր . այլ յարատեւէ միով և միայն
ով յաւիտենականութե ։ Անդ եղիցի գա
րունն մշտնջենական, որ նորութե և սիւ
գաւն հոգւոյն սրբոյ միշտ ծաղկի ։
Անդ ամենեքեան ցնծան . ամենեքեան
երգեն . և գովեն զայն ծայրագոյն բա
րին տուօղն ամենից բարեաց ։

## ԻԶ .

Ո՜վ սիրական մայր իմ Եմ քաղաքդ նոյ ։
Ո՜վ օթեւան ապահով . Ո՛ երկիր բա
րի ։ ուր գտանին համայնք այնոքիկ . որոց
ցանկան սիրտք մեր ։ Ո՛ քաղաքացիք
հանդիսաք, և ժողովուրդք անմարտունչք ։
Ո՞հ . երբ արդեոք վերջասցի պատերազմ
այս ։ Ե՞րբ վախճանեսցին աւուրք ան
տարանաց իմոց ։ Ե՞րբ արդեոք եկեսցէ
ժամ

օրս այս։ Ե՛րբ արդեօք երևեցայց առաջի երեսաց տ՟ն իմոյ։ Վա՜յ ինձ եղկելոյս․ արտասուօք արեան ողբալոյս․ վ՟ն սակաւուց և անցաւորաց փափկութեանց․ հեռացայ ՚ի յերկնից հանգստենէ․ վ՟ն աշխարհիս իրաց, որ արժանիէ մանաւանդ ատելութե՟ քան թէ սիրոյ․ զրկեցայ ՚ի քէն մայրդ իմ գեղեցիկ եդեմ․ Ո՛հ ցաւոյս զինչ առնեմ եղկելիս․ զի զոր պարտէի ատել զայն սիրեցի․ իսկ զոր պարտէի սիրել քամահեցի․

## Առաջադրութիւն․

Որով հետև կոչեցեր զիս առ արքայութիւն քո տ՛ր իմ․ կամիմ և ցանկամ մտանել ՚ի նա։ Վ՟ն որոյ կամիմ այսու հետև զայն առնել․ զոր մինչև ցայժմ ոչ արարի․ և ոչ ևս առնել զայն․ զորս մինչև ցայժմ արարի վ՟ն սիրոյ արքայութե՟։ Հեռացայց ուրեմն յայսմանէ և յայնմանէ իրէ․ որ արգիլէ զմուտս իմ յարքայութիւն․ և արարից զայս և զայն իրն․ որ դիւրացուցանէ զընթացս իմ ՚ի յերկինս։

## Ե Շնորհակալութ՟ն․

Շնորհակալ լեր զա՟յ վ՟ն տալոյ քեզ զբարիս խորհուրդս։ Աղաչեմ զնա զի տացէ քեզ զօգնութիւն իւր․

իւր․ առ ՚ի գործ ածել զառաջագրու-
թին,

Մատոյ Նմա՛ զքեզ բոլորովիմբ․ և այլն․

## Ի զօրն տօն Ծննդեան փառացն եկեղ․
## Որ տօնեսցէ տօն ծն վն մեր․

Ո՜ տուն ամ պայծառագոյն և գեղեցկագոյն, սիրեցի զվայելչութի քո․ և զտեղի բնակութե տն իմոյ․ Առ քեզ հառաչէ տիւ և գիշեր պանդխտութի իմ․ առ քեզ հեծեծայ սիրտ իմ առ քեզ, նային աչք իմ․ զքեն խոկայ միտք իմ․ և առ ընկերակցութին բնակչացն քոց ժամանել ցանկայ հոգի իմ․ Աղաչեմ զնա որ արարն զքեզ․ զի զիս մուծցէ ՚ի քեզ․ քանզի վն քո արար զիս․

Եւ մանաւանդ դու ասա՛ Նմա՛․ և դու աղաչեա՛ զնա․ զի արժանացուսցէ զանարժանս հաղորդակից լինել փառաց քոց։ Ո՛վ մայր իմ աղաչեա՛ զստեղծողն քո զի զիս ընդ բնակիչսն քո դասեսցէ․ և գեղեցիկ տեսլեանն քում արժանացուսցէ վն որ արեանն իւրոյ որով գնեաց զիս և զքեզ տես՛ զպանդխտութին իմ․ նայեսցի յաքսորանս իմ․ և առ ապաւորս դարձո՛ զզօրամածագին աչս քոյս։ Մոլորեցայ ես որպ զոչխար կորուսեալ յայսմիկ աքսորականաց վայրի․ սատա՛

ցհովիւն

ցհովլիան բարի. զի առաջնորդեսցէ զնա
յերկիր բարի. որ ես դու.

Ո՛վ մարիամ. մարիամ. մարիամ. կոյս սրբազնագոյն. մայր այ. Թագուհի երկնից. տիրուհի աշխարհի. գանձարան հոգւոյն սրբոյ. Շուշան մաքրութեան. Վարդ համբերութեան. Դրախտ ամենից փափկութեանց. Հայելի կատարեալ սրբոյ. և օրինակ անմեղութեան. աղաչեմ զմիածին որդին քո վն աքսորեցեալ գերւոյս.

Ո՛վ համայնք ոգք և սրբուհիք, աղաչեմ զձեզ վն սիրոյն այնորիկ. որ անցուցանելով զձեզ ընդ ալեկոծեալ ծով աշխարհիս. հասոյց 'ի նաւահանգիստն երկնից. աղաչեսջիք վն իմ. զի մի ընկղմեալ կորիցեմ. այլ հողմով օգնականութեան ձերոյ. առ ձեզ ժամանեալ օրհնեսցեմ զստեղծօղն իմ և ձեր յաւիտեանս յաւիտենից. ամէն.

## Մտածութիւն եօթն խորհրդոց.
## Յաղագս բոլոր բարերարութեանն այ.

Յայսմիկ աւուր մտածեսջիր զբարերարութիւն այ. որք զի տեսանելով զանչափ բարութիւն նր. գեղ 'ի քեզ. առաւել բորբոքեսցիս սիրով նր. Եւ թէպէտ անհունքն

անհունքեն բարերարութ՟քն այ· առա կայն զերից միայն խօսիցուք· այսինքն· զստեղծագործութ՟է· զպահպանութ՟է·
և զկոչելութ՟է առ ն՟ք հաւատոն։

Մտածեա՛ ուրեմն զնախկին բարերարութիւն այ· որ է ստեղծագործութիւն· և տես թէ զինչ էիր նախ քան զստեղծանելն քո։ Իրաւի ոչ այլ ինչ էիր· եթէ ոչ զուտ ոչ ինչ· որ չնչինն է քան զամ իր· բայց թարց արդեան քո յորժամ թափուրէիր· այ ստեղծեաց զքեզ յոչնչէ ոչ թէ ՚ի քեն զկարիս ինչ ունէր· այլ միայն վն բարութ՟ե իւրոյ անհնոյ։ Ետ քեզ զմարմին զգայարանօք իւրովք հանդերձ· նախ զհոգի հանդերձ երիւք պատուականօք զօրութ՟եք այնոքիւք· որոց մինն յիշողականութ՟ի· միւսն իմացականութ՟ի· և երրորդն կամք կոչի։ Բայց գիտեա՛· զի տալով քեզ զայսպիսի հոգի· ետ ևս քեզ համանգամայն ընդ նմին զամ ինչ· քանզի· ոչ ինչ կատարելութ՟ի գտանի յայլ ամ ստեղծուածս· յորմէ ոչ գտանի ՚ի մարդս։ Քանզի համայնք ստեղծուածք կամ են բանական որպիսի է հրեշտակն· կամ են զգայականք որպիսիք են անասունք· կամ են աճողականք· որպիսի է տունկն· և կամ գոյացութ՟ի միայն· որպիսի է քարն։

Արգ

Արդ մարդս ընդ հրեշտակաց է բանական ընդ անասնոց զգայական· ընդ տնկոցն աճողական· և ընդ քարանց և փայտից է գոյացութին։

Երկրորդ մտածեա՛ զբարերարութին պահպանողութե· և տես· թէ ո՞ր ժամ գոլն քո կը խմ 'ի նախախնամութե նոյ· Ո՛չ կարէիր կեալ կէտ մի· ոչ և կարէիր շարժել զքայլ մի թարթ օգնականութե նր։ Տես թէ ո՞չ ստեղծ զամ մն քո· և 'ի ծառայութին քո· այսինքն զերկինքն երկնայնովք· զերկիրս երկրայնովք· զյօդն յօդայնովք· և զծովն ծովայնովք։ Նայեաց և տես թէ որ քան մարդիկք գտանին 'ի պէսպէս թշուառութե և 'ի զանազան տառապանս· զորս և դու կարէիր ունել· բայց ած պահեաց զքեզ։ Քանիք քանիք գտանին կոյրք· կաղք· համրք· խուլք· ցաւագարք· աղքատք· և չքաւորք որոց կարէիր նմանիլ և դու եթէ ած ոչ էր պահպանեալ զքեզ յայնցանէ։

Երրորդ մտածեա՛ զբարերարութին կոչելոյն զքեզ 'ի հք և ուղղափառ հաւատն քրիստոնէութե որ է մեծագոյն բարերարութին· քան զամ բարերարութին։ Արդ, զի՞նչ լինելոց էր վն քո· եթէ ծնանիցէիր 'ի ծնողաց հեթանոսաց· և

և տիեզականաց նեստորականաց․ կամ արիոսականաց․ Բայց ոչ արար ընդ քեզ այսպէս, այլ կոչեաց քաղցրաբար զքեզ առ ինքն հաւատն իւր․ արար զքեզ որդի իւր 'ի ձեռն ինքն աւազանին․ և հաղորդակից եօթեանց խորհրդոց սրբոյ եկեղեցւոյն․ Քանիք քանիք կան այժմ 'ի դժոխս․ որոց մեղքն սակաւք և փոքրիկքէին․ քան զքոյդ․ սակայն ոչ համբերեաց, ոչ ետ զժամանակ նց ապաշխարելոյ․ և ոչ սպասեաց ապաշխարութե նց․ Իսկ քեզ համբերեաց․ ետ զժամանակ ապաշխարելոյ․ և տալով քեզ զբարիս խորհուրդս․ և զներշնչմունս․ սպասեաց քեզ մինչև ցայսօր․

Այսոքիկ են բարերարութիւնք յայտնիք․ ևս գոն այլ բարերարութիւնք ծածուկք և անյայտք․ զորս ոչ կարեն գիտել եթէ ոչ նք․ որք առնունն․ ևս գոն բարերարութիւնք այնքան ծածուկք և անյայտք․ մինչ զի ոչ ևս նա՛ կարէ իմանալ․ և գիտել որ առնու․ այլ միայն նա՛․ որ տանէ․ Քանի՛ քանի՛ արդիւնաւորեցար․ թէ ած զքեզ լքիցէր յերեւաց իւրոց վն հպարտութե․ ագահութե․ և ապերախտութե քոյ․ ած արար ընդ այլոց․ Բայց ոչ արար․ Զքանիս չարիս․ և կամ քանիս զաւիթս․ և զպատճառս․

ճառս չարեաց երարժ 'ի քէն. բայց դու
ոչ գիտես: Քանիցս անգամ սատանայ
կամեցաւ խորտակել զքեզ ով զօրեան.
իսկ միջնորդն այ և մարդկան. Քրն մեր
յս քս աղաչեաց զհայր վն քո զի մի սպա
կանիցէր հաւատ քո. Կարեմք ճանաչել
զբարերարութիւն այ ներգործական. որք
կայանան յաչնելն մեզ բարիս. բայց ո
կորէ ճանաչել զբարերարութիւն պահ
պանողական. որք ոչ կայանան յաչնելն
մեզ բարիս. այլ կայանայ 'ի փրկելն զմեզ
'ի չարեաց: Ուստի վն այսորիկ. և վն
այլոց անհնից բարերարութեանցն այ զորս
ոչ գիտեմք և ոչ ճանաչեմք միշտ և հանա
պազ պարտիմք շնորհակալ զայ լինել և
օրհնել զանունն որ նր: Եւս պարտ
խմամբ զպարաւանդութիւն և զպարտա
ւորութիւն մեր առ ած:

ԻՂԶ.

Ո՞ես ով՛ ապերախտ հոգեակ իմ. թէ որ
քան բարի եղև ած միշտ ընդ մեզ:
Տես զորպիսի. և զոր քանս արար նա
մեզ. և մեք զինչ արարաք վն նր: Տես
թէ որ՛ քան գթած և ողորմած եղև գեպ
'ի մեզ. իսկ մեք միշտ ապերախտք եղաք
գեպ 'ի նա. վայ ինձ վայ. թէ ով տմար
գօրէն առ ոտս կոխեցի զայս քան բարե
րարութիւնս. նա և անպատուեցաք. զշնորհս
նր:

նր։ Ո՛հ մեծի ապերախտութեա՛ն զի զորս ետ մեզ զի նորօք սիրեսցեաք զնա. եւ ծառայեսցեաք նմա. զնոյնս գործիս արարաք ՛ի վշտացուցանել զբարերարն մեր։ Արդ՛ ով հոգի իմ. օրհնեսցուք եւ բարեբանեսցուք զբարերարն մեր. Մի՛ լիցուք այսուհետեւ ապերախտք. այլ հաւատարիմ ծառայ նր։ Զի արդ այսուհետեւ ոչ ծառայեսցուք Տն մերում որ զայսքան արար մեզ եւ վն մեր։

## Առաջադրութիւն.

Այսուհետեւ կամիմ ճանաչել զբարերարութիւն Այ իմոյ. եւ կամիմ ծառայել նմա հաւատարմաբար. Եւ առ ՛ի առնել զայս. կամիմ ՛ի բաց մերժել յինէն զայս եւ զայն իրս. որ արգելէ զիս. ՛ի հաւատարմաբար ծառայելոյ Այ իմոյ բարերարի. կամիմ օրհնել զանուն նր միշտ եւ ասել. Օրհնեցից զՏր յա՛մ ժամ, յա՛մ ժամ օրհնութիւն նր ՛ի բերան իմ։

## Եզրափակութիւն.

Աղաչեմ զԱծ եւ ասա Տր ի վերոյ.

Աղօթք վասն շնորհակալ լինելոյ զԱյ : վասն անհունոյ բարերարութեան նր.

Ո շնորհակալութիւն մատուցանեմ քեզ ամենակալ

ամենակալդ ած, որ զիս ոչ ստեղծեցեր զքար. զօձ. և զայլ անասուն. այլ արա րարեր մարդ 'ի պատկեր և 'ի նմանութե քո. և ետուր ինձ զհոգի անմահ. որ ոչ ինչ այլ ով իւիք կարէ յագիլ. եթէ ոչ քև միայն։

Ծանիր ով հոգի իմ զարմանաւորութին քո. զի թագաւորն այն ընդ որոյ գեղեցկութին արեգակն և լուսինն զարմանան. յորմէ սիւնք երկնից դողան, նա և յորմէ բոլոր երկիր պատկառեալ դողայ, նա ստեղծ զքեզ. 'ի բնակարան և 'ի պատուճառ ո̃ր, և կամի օթևանիլ 'ի քեզ. Արի՛ ուրեմն ով հոգի իմ, արի և ել ընդ առաջ. ցոյց զհիւրընկալութին նոյն քում, և մոյծ զնա 'ի սենեակ քո։

Ո՛չ զարմանամ այն քան ընդ սաստիկ սէրն որդւոյ քոյ. որ արբեցեալ սիրով իմով. եթող զծոցն քո հայրական. ոչ գարշեցաւ 'ի բնակելոյ 'ի կուսական որովայնի, և Լ. և Գ. ամօք չարչարեցեալ վն իմ զիս որոնեաց. նա և յետ գտանելոյն զիս. արեամբ իւրով գնեաց. որքան զարմանամ զկուրութիս և ընդ ամարդի ապերախտութիս իմ. քան զի զայս քան թանկագին գնեցեալ հոգիս. կամեցայ մանաւանդ սատանայի ծառայեցուցանել. քան թէ 'ի գիրկս փրկչին իմոյ հանգուցանել։ Զգոհու

Ո գոհութիւն մատուցանեմ անչափ
ա բարերարութեան քում ով ստեղ
ծող իմ. զի ոչ ստեղծեցեր զիս կոյր.
կաղ. խուլ. յաւագար. և համր. այլ
ետուր ինձ զհոգի և զմարմին առողջ։
Տուր ինձ տ̃ր զի մի այսու հետև մե
ղանչիցեմ զզգայարանօք մարմնոյս. կամ
կարողութեամբ հոգւոյս։ Բարձ յինէն
զագիտութիւն. և տուր ինձ զիմաստութիւն
գտանելոյ առ քեզ. զի միայն զքեզ սի
րիցեմ. միայն քեզ ծառայիցեմ և միայն
քև զմայլիցիմ՝ ի յանզրաւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

Ահա այսոքիկ են նախկինք. Է. մտա
ծութիւնք զորս կարես մտածել յիւ
րաքանչիւրում աւուր եօթն երեկին.
կարի հարկաւորք են այսոքիկ մտածու
թիւնքս ամենից քրիստոնէից որք կամին
կեալ քրիստոնէաբար. և լինիլ այրք կա
տարեալք սակայն առաւել հարկաւորա
գոյնէ վ̃ն ն̃ց որք նորապէս կամին դառ
նալ առ ա̃ծ։ Քանզի. այն մարդն որ
կամի դառնալ առ ա̃ծ. պարտէ ունել
զահ և զսէր ա̃յ. զզարշումն ՚ի մեղաց.
և ճանաչել զյունայնութիւն աշխարհիս.
Ի՛սկ զայսոսիկ ոչ ոք կատարելապէս
կարէ

կարէ ունել Թարց մտածականի աղօթին.
Վ͞ն որոյ մեծաւ պատճառաւ ասէ այն
մեծ վարդապետն բէլարմինոս, Թէ մարդ
կօրէն խօսելով ասեմ: Անհնարինէ.
Թէ ոք կարիցէ կենցաղավարիլ քրիստո
նէաբար. եթէ ոչ ծախիցէ յամենայնում
աւուր գոնեաց զչորրորդ մասն ժամու
միոյ 'ի մտածմունս ա͞ծայնոց իրաց:

Հետեւին աստ երկոյտասան. այլք
մտածութիւնք 'ի վ͞ն չարչարանացն Ք͞ի.
Եւ պատճառ գրելոյս է: Զի ո͞պ ասա
ցինք 'ի վերոյ, ամենից քրիստոնէից պար
տէ ունիլ զսէր. և զերկիւղն Ա͞յ: Արդ
'ի վերոյ ասացելովք եօթնեամբք մտածու
Թեամբք պատճառին 'ի մեզ երկիւղն Ա͞յ:
Իսկ երկոյտասանիւք այսոքիւքս զորս
գրելոց եմ աստ. ծնանին 'ի մեզ սէրն Ք͞ի.
Քանզի որպիսի քարացեալ սիրտ լիցի
սիրտն այն. որ մինչ տեսցէ զայնքան
դառնա կսկիծ չարչարանս. զորս անմեղ
ղաբարկրեաց վ͞ն սիրոյ մարդկան. և
ոչ սիրեսցէ զնա:



Աղօթութիւն ի վերջոյ սրբութեանց
չորեքշաբաթուոյն է.
Նախ քան մաղթութիւն.
Յաղագս ընթացման տունից.

ՏՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ
Նախ քան զտալն զմեզ մար-
մին և զպատուական ար-
իւնն իւր աշակերտացն.
յարուցեալ 'ի սեղանոյն փածաւ զղեն
ջակ. և սկսաւ լուանալ զոտս աշակեր-
տացն։ Արդ հայեաց ով հոգի իմ, և
տես զօրինակն խոնարհութեան, զոր տայ
քեզ այսօր։ Տես թէ ով է նա. որ առ-
նէ զպաշտօնս այս այսքան անարգ և քա-
մահելի։ Նա է յո՞ ջս որդին այ. առեղ-
ծօղն

ծողն երկնի և երկրի։ Արդ․ զինչ առ-նէ, Լուսնայ զոտս աշակերտաց․ և անօ-րէն յուդային։

Ո՛վ բարի յն․ մն եր այդ․ քան խոնար-հիս։ Ո՛վ առաքեալք և ծառայինք ձե-ռինք ոմ ոչ գարշիք 'ի լուանալոյ զոտըմ-նի ոտան աղքատ ձկնորսաց․ և մանաւանդ զոտս յուդայի․ որք զկնի սակաւուց ըն-թանալոցք են առ 'ի վաճառել։ Ն՛․ ար ծաթէց։ Հաւատալի է թէ, յորժամ ակատ փրկիչն լուանալ զոտս յուդային․ առաւել արտասուօք լուանայր․ քան թէ ջրով․ և գուցէ ասէր եւս ընդ մնր։ Ո՛վ յուդա յուդա․ ահա կամ աստ ան-կեալ յոտս քո․ արա ընդ իս զոր առնե-լոցես․ միայն թէ մի կորուսցես զհոգի քո։ Բայց սակայն այսքան մեծ օրինակն խոնարհութեն ոչ եղև բաւական առ 'ի կակղացուցանելոյ զքարացեալ սիրտ նո

Ո՛վ հոգի իմ․ տես թէ որ քան մեծէ եղեալ զօրութեն չար սովորութե։ Եւ եւ բազմիցս նմանեցայ յուդայի․ զի որ քան բարերարութիւս արարեր ինձ․ այն քանիցս զոտս իմ լուացեր․ բայց ես ոչ իմացայ։

Երկրորդ․ գոլով պետրոս առաքեալն խոնարհագոյն․ քան զամենեսեան․ էր բազմեալ յետին տեղւոջ․ և մինչ

եհաս տէրն առ նա առ 'ի լուանալ զոտս նր̃, զարմացմամբ մեծաւ աղաղակեաց ասելով: Տր̃. դու կամիս լուանալ զոտս իմ. Ո՛չ ապաքէն դու ես ստեղծողն երկնի և երկրի: Ո՛չ ապաքէն դու ես այն, զոր ես ճանաչեցի և խոստովանեցայ զքեզ որդի այ̃ գոլ. կամիս լուանալ զոտս իմ. որ եմ աղքատիկ ձկնորս մի, և ողորմելի մեղաւոր: Վա՜յ ինձ. զի եթէ պետրոս գոլով ոչ զինքն անարժան համարէր, այլ որ քան անարժան պարտիմ համարել ես զիս առ նր̃ հաւոր գութին:

Չորրորդ, 'ի վախճանի ասէ տէրն ցաշակերտսն: Եթէ ես որ տր̃ և վարդապետեմ ձեր. լուացի զոտս ձեր. այսպ̃ և պարտ է ձեզ լուանալ զոտս միմեանց: Զայս արար տէրն մեր ոչ այնքան առ 'ի սրբել զմարմնաւոր աղտս յոտից նց̃. որք ոչ կարեն զհոգւ̃ աղտեղացուցանել. որքան արար առ 'ի ուսուցանել մեզ զհերիս խրս: Նախ թէ պարտիմք նախ քան զհաղորդիլն մեր լուանալ զհոգիս մեր յաղտից մեղաց ջերմ արտասուաց: Երկրորդ. թէ պարտիմք խոնարհիլ և ստորնագունից մերոց: Երրորդ. թէ պարտիմք առնել զբարիս և թշնամեաց մերոց. որպ̃ արար տէրն յուդայի:

Բայց վայ ինձ. զի միշտ զհակառակ սոյին առնեմ։

## Աղօթք հայցելոյ յա̃յ զխոնարհութիւն.

Ո՜վ Տէր իմ. զինչ ունիմ զոր ոչ առի. 'ի քէն իսկ եթէ առի. ապա՛ ըն̃ էր պարծիմ։ Որ ով 'ի բարեացն 'ի քէն առ-ւեցելոց ոչ զփառս քո. այլ զփառս իւր խնդրէ. նա գողէ և աւազակ. և նմանէ սատանայի. որ կամեցաւ զփառս քո գո-ղանալ։ Ընդէ՞ր հպարտանամ ես հող և մոխիր։ Ընդէր բարձրամտիմ ապա կռնութնս և կերակուրս որդանց։ Ամա-չեաց հոգի իմ ամաչեաց. զի որդին Այ զինքն որդն կոչէ ասելով դաւթիւ. Ես եմ որդն և ոչ մարդ. իսկ ես որ հա-ւաստեաւ որդն եմ. և նախատինք մարդ-կան. մեծ ամն̃ զիս համարիմ։ Աղաչեմ զքեզ հայր երկնաւոր. յորժամ յառնէ 'ի յիս շարժումն իմն պարտութեն. յայն ժամ պարգևեա ինձ զշնորհս խոնարհու-թեն. զմայրն ամենից առաքինութեց, վս̃ սիրոյն խոնարհագոյն որդւոյ քո։ Արա՛ Տէր. զի ճանաչիցեմ զքեզ. և ճա-նաչիցեմ զիս. զի որ զքեզ բարւոք ճա-նաչէ. նա սիրէ զքեզ. և որ սիրէ զքեզ. քամահէ զինքն. իսկ որ քամահէ զինքն, առաւել սիրէ զքեզ քան զինքն։ Արա՛

Տէր

Տէր զի յամ աղմկէ հոգւոյ. և մանաւանդ 'ի մեղաց հպարտութեն և անապարհութեն աղաւտեցեալ. հեզութբ և խոնարհութբ քեզ ծառայեցեմ, այժմ և յաւիտեան. ամէն.

## Մտածութիւն Երկրորդ.

### Յաղագս առաժմնելոյ մարմնոյ նա- ոչընտան զնն.

Զենք որոյ լուայ տէրն մեր զոտս աշակերտացն. գարծ- եալ բազմեցաւ ընդ նն 'ի սեղան. Եւ առեալ զհացն 'ի ձեռն իւր օրհնեաց եբեկ և ետ նց ասելով. Առէք կերէք. այս է մարմին իմ որ վն ձեր և բազմաց բաշ. և այլն.

Ստանեա՛ հոգի իմ զատտութիւն տէրն ջն զեալ 'ի մարգենկս. Քանզի յայն մին և'ի նոյն ժամանակին. յորում յու- դա՛ լարէր զորոգայթ մատնողութե. քա- հանայապետքն խորհէին սպանանել զնա՛ 'ի մէջ երկուց աւազակաց, հրեայքն պատրաստէին զխաչն. 'ի դարբնոցն չին էին զբեեռւն. և 'ի տունն պիղատոսի զինւորքն զուգէին զփշեայ պսակն. 'ի մի և 'ի նոյն ժամուն քս պատրաստէր նց զանմահարար կերակուր 'ի մարմնոյ

և

և յարենէ իւրոյ։ Ո՛հ անպատմելի սէր։ Ո՛հ անհուն մարդասիրութն քի։ Եւ զայս արար առ՚ի գործով կատարել զոր յառաջն ասացեալէր։ Բարիս արարէք ատելեաց ձերոց։

Այժմ առա՛ ո՛վ հոգի իմ. արարեր արդեօք զայս ըստ օրինակին փրկչին քոյ. սիրեցեր զթշնամին քո. զբարիս արարեր ատելեաց քոց.

Ասէ նր աւետարանն, թէ նախ քան զբեկանել հացին. գոհացաւ զերկնաւոր հօրէն. առ ՚ի յուսուցանել մեզ. թէ նախ քան զմատչութն ոչ միայն առ նր հաղորդութիւն. այլ և յառաջ քան զմարմնաւոր կերակրոյ ուտելն պարտիմք համբառնալ զմիտս առ տուօղն ամենից բարութեանց և օրհնել զսբ անուն նր։

Արարեր այսպէս. ոչ. այլ համանգոյն խոզից կերեր զխնձերուն թարց հայելոյ քո ՚ի ծառն. վն որոյ արդիւնաւորեսցար բազմիցս, թէ չօրհնայցեր ծառն ողորմութն վն քո.

Երկրորդ. Զկնի որոյ ճաշ զբաժակն. գոհացաւ զնա ասելով. Արբէք ՚ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ նորոյ կտակի. որ հեղանի վն ձեր և վն բազմաց, ՚ի քաւութիւն, և ՚ի թողութիւն մեղաց.

Մտածեմ ով հոգի իմ • զի ծըն մեր յա քս հաստատեաց ըզ խորհուրդս զայս • ոչ զի իցէր յիշատակ մեծագունից զարմանալեաց իրաց • Զի յայլ իրս զօրարարն • յայտնի միայն էր իմն իւրոյ ածայնոյ կատարելութն • բայց յայսմիկ խորհրդոյս յայտնին բազումք կատարելութիւնք • որոց գլխաւորքն են երեք • այս ինքն կարողութին անհուն • իմաստութին զարմանալի • և բարութին անճառելի • ընխորհրդոյս այսմիկ երևի կարողութին անհուն • զի 'ի ներքոյ տեսակին հացի և գինոյ կայ բոլոր մարմինն • բոլոր արիւնն բոլոր հոգին • և բոլոր ածութին ։ Երևի իմաստութին զարմանալի • զի եգիտ ըզ կերպ մի հեշտ • և զհամեղ • որ ով միաւորէ զմեզ ընդ ինքեան ։ Զի ոչ ինչ իր այնքան միաւորի ընդ մարմնոյ մերում • ոչ կերակուրն և ըմպելին ։ Յայտնի ևս բարութին նր անճառելի • քան զի միջնորդութե սրբոյ հաղորդութենս հաղորդէ մեզ զամ հոգևորս բարիս, և զկեանս յաւիտենականս • ըստ որոյ ասաց ։ Որ ուտե 'ի հացէս այսմանէ • կեցցէ յաւիտեան ։

Երրորդ • մտածեմ զբանն այն • զոր յետոյ ասաց ։ Զայս արարէք 'ի յիշատակ իմ ։

Մտածեմ և տես • Թէ ոչ ցանկայ

քո

քս զի ունիցիմք զնա՛ 'ի մտի։ Ո՞հ թէ որ քան մեծէ սէրն քո դէպ 'ի մեզ եկեղե ցին այսինքն դէպ 'ի հոգիս հաւատացելոց։ Սիրտ կամէր չուել յաշխարհէս առ հայր 'ի յերկինս. և ո՞վ զի մի ծնանիցէր մոռա ցումն իւր. եթող 'ի յիշատակ զս͞բ խոր հուրդն մարմնոյ և արեան իւրոյ, յորում մնայր նոյն ինքն առ 'ի զարթուցանել առ ինքն զսիրտ հարսին իւրոյ։

Իսկ 'ի միւս կողմանէ մտածեա՛ հոգի իմ զապերախտութիւն քո. որ մոռա նաս զնա. որ գոլով ինքն 'ի յերկինս. կամի մնալ ևս ընդ քեզ 'ի յերկրի վ͞ս անպատմելի սիրոյ քոյ.

## Աղօթք նախ քան զս͞բ հաղորդութիւն.

Սարսափիմ և դողամ ո՛վ Թագաւոր հրեշտակաց. մինչ մտածեմ զչնչին նուաստութիւն իմ. և զահարկու մեծու թիւն քո. կամիմ մատչել առ քաղցրա գոյն խրախճանն ս͞բ մարմնոյ. և պատուա կան արեան քոյ. բայց մինչ նայիմ 'ի գիրն մեղսամած հոգւոյս. և 'ի հան դերձն անմեղութ͞ն. զոր 'ի մկրտութ͞ն առի. զոր և այժմ մեղօք աղտեղացուցի և պատառոտեցի. ոչ իշխեմ համարձա կել. Նեխեցաւ և փտեցաւ վէրքիմ յե րեսաց անզգամութ͞ն իմոյ. իսկ ես ո ղորմելիս անձկացեալ յամենայն. ոչ գիտեմ

գիտեմ Թէ զինչ տասցիս․ Պատուէալքեն
զիս նեղութիւնք յամենուստ և վիշտք դժո
խոց դուռն զիս․ Զի արդ կայցից կեալ
Թարց մարմնոյ և արեան քոյ զորմէ ա-
սես․ Եթէ ոք ոչ կերիցէ զմարմին որդ-
ւոյ մարդոյ․ և ըմպիցէ զարիւն նր․ ոչ
ունիցի զկեանս յինքեան․ իսկ յաղագս
ծանուց և բազմապատկացս մեղաց ոյք
բարձրացան քան զգլուխ իմ՝ դողացու-
ցանեն զիս բանքն առաքելոյն քոյ որ
ասէ․ Որ ոք կերիցէ զհացս այս․ և ըմ
պիցէ զբաժակն տն անարժանապէս․ պար
տական եղիցի մարմնոյ և արեան տն․
Ո՛վ երանելի և գթած տէրութիւն․ Ո՛վ ահար
կու մեծութիւն․ Ո՛վ անճառելի և անքննե
լի սրբութիւն․ Յո՛ երթայց յոգւոյ քումմէ․
և յո՛ փախեայց յերեսաց քոց․ Զի դու
ըզ սիրտս և զերիկամունս քննես․ և խոր
հինք խորհուրդք խղճմտաց բացեալք և
մերկապարանոցքեն առաջի քոյ․ Առ
քեզ դիմեմ առ ՚ի լուանալ․ ով աղբիւր
ողորմութեան․ Առ քեզ առ ՚ի բժշկել
փութամ․ ով գթած բժիշկ սամարացի․
Առ քեզ դիմեմ տր յս․ յորմէ թէպէտ
տէ ՚ի դատաւորէ դողամ․ սակայն տէ ՚ի
փրկչէ յուսադրիմ․ Քեզ ցուցից տր իմ
զվէրս իմ․ Քեզ յայտնեցից զամօթս իմ․
Տեսանեմ տր իմ զմեղս իմ մեծամեծս

և

և բազումս. և դողամ. իսկ հայելով 'ի քաղցրութիւն և յողորմութիւն քո. որ ոչ գոյ թիւ. յուսամ 'ի քեզ համարձակիմ: Հայեաց առ իս տր̃ յս̃ ք̃ս թագաւոր յաւիտենական փառաց: Հայեաց և ողորմեաց ինձ. ո՛ ա̃ծ և մարդ յաղագս մարդոյս մարմնով խաչեցեալ: Հայեաց 'ի որբաղնագունեղ մարմինն քո. 'ի վր̃ խաչին բևեռեցեալ. տիգաւ խոցեալ ձաղանօք հարուածեցեալ. նա՛ և անողորմաբար վիրաւորեցեալ: Յիշեա՛ տր̃ զարեան քրտունսն կայլակնաձև յերկիր հեղեալ. նոյն գթութիւն որ զքեզ յերկնից յերկիր իջոյց եղիցի բարեխօս առ քեզ:

## Մտածութիւն երրորդ է վերայ չորրորդոյն գէ.

## Ցուցմունս տնօրէնութեան տն̃ բարերարին

Աւարտեալ տէրն մեր զայն խորհրդաւոր ընթրիսն, եւ աշակերտօքն իւրովք 'ի լեառն ձիթենեաց, առ 'ի կալ յաղօթս նախ քան զմտանելն իւր 'ի պատերազմն չարչարանաց իւրոց: Եւ այսու ուսոյց մեզ. թէ յա̃մ վիշտս. և 'ի նեղութիւնս մեր պարտիմք դիմել առ տր̃ աղօթքն. որոյ զօրութիւն թեթևանան

նոյն վիշտք մեր. և յաղթեմք ամենից
ընդ դիմութեանց.

Առնու ընդ իւրեան զերիս սիրական աշակերտս. այսինքն զպետրոս, զյակոբոս. և զյովհաննէս. զի որ̃ տղա՛ յառաջն տեսին զփառս այլակերպութե՛ն ՚ի լեառն Թաբօր. և ևս տեսանիցեն զտրտմութիւնս և զվիշտս. զորս ունելոցէր վն̃ մարդկայնոյ ազգիս։ Եւ առ ՚ի ցուցանել թէ ներսին նեղութիւն ոչ էր փոքրագոյն քան զնեղութիւն զոր արտաքուստ կրէր. ասէ ցաշակերտսն զցաւագին բանն այն. Տրտում է անձն իմ մինչև ՚ի մահ. կացէք աստ, և հսկեցէք ընդ իս.

Զայս մինչ ասաց Տէրն մեր. հեռացաւ յաշակերտացն տակաւ ինչ, և անկեալ ՚ի վր̃ երեսացն. ըսկսաւ մեծապատկառանօք աղօթել առ հայր և ասել։ Հա՛յր անցցէ յինէն զբաժակս այս եթէ հնարէ. բայց ոչ եղիցի կամս իմ այլ քոյդ։ Տես ո՛վ հոգի իմ զկերպ և զեղանակն աղօթելոյն քո։ Անկանի ՚ի վր̃ երեսաց ամ̃ զանարժան մեղաւորս, որ ոչ իշխէ յերկինս վեր հայել. Անկաւ ՚ի վր̃ երեսաց առաջի հօրն երկնաւորի. որ բառնալոցէր զմեղս աշխարհի ՚ի թիկունս նր։ Անկաւ յերկիր ՚ի վր̃ երեսաց. առ ՚ի յօրհնել զերկիր. և բառնալ զանէծս ՚ի նմանէ.

նմանն․ զփուշ և տատասկ բուսուցանեն
լայ․ Բայց կարի անագան օրհնես զեր
կեր ծով յն․ զի արդէն բուսուցեալ է
զփուշ առ՚ի պատկել զգլուխ քո։ Արդէն
բուսուցեալ է զերկաթահանս․ յորոց ե-
լեալք գեղարդն և բևեռք թափանցես
ցին ՚ի մարմին քո ծբ։ Աստ զերկուս իրս
ուսանիմք ով հոգի իմ։ Նախ․ թէ պար
տիմք ՚ի համայն նեղութիս մեր․ մեծաւ
խոնարհութբ աղօթել․ և այսու դիմել
առ ած։ Երկրորդ պարտիմք համակեր
պել զկամս մեր ընդ կամացն այ։

Երկրորդ մասն։ Երիցս անգամ կրկ
նեաց զբանս այս։ Հայր իմ․ անցո
յինէն զբաժակս այս։ Տես․ ոչ ասէ
տր․ կամ ած․ այլ ասէ․ Հայր․ առ ՚ի
գութ շարժել զնա․ Մեծաւ աղաղա
կաւ և առատ արտասուօք աղօթէ առ
՚ի ուսուցանել մեզ․ թէ որ քան մեծէ
նեղութին․ և որ քան մեծէ վիշտն յորոց
աղաղակել ցանկամք․ այնքան մեծ պար
տէ գոլ արտասուօքն և հառաչանօքն ՚ի յա
ղօթս։ Երիցս անգամ զմի և զնոյն բանն
ասաց․ յերրորդութն երկարապէս աղօ
թեաց․ առ ՚ի ցուցանել․ թէ յորժամ
աղօթիւք ոչ առնումք շուտով զայն զոր
խնդրեմք․ ոչ է պարտ յուսահատիլ․
այլ յարատևել յաղօթս։

Երրորդ

Երրորդ մասն։ Յարուցեալ յն յաղօթիցն եկն առ աշակերտսն. և ետես զնոսա զի քնեալ էին։ Տես ով հոգի իմ. թէ յորպիսի տառապանս գտանի սիրական փեսայն քո յն։ Զի աղաչէ զհայրն իւր երկնաւոր. և նա ոչ տայ պատասխանի։ Կամի ունիլ զմխիթարութն ինչ յաշակերտաց. իսկ նք քնին։ Դառնայ դարձեալ յաղօթս. ոչ ևս անդ գտանէ զփոփումն։ Որպիսի պարտէզ եղև պարտէզն գեթսեմանի վն որդւոյն այ. Ո՛հ թէ որպիսի դառնէ պատուղ քո վն յն. ո՜վ պարտէզ գեթսեմանի։ Զի յայլ պարտէզ գտանին փափկութիւնք. իսկ աստ ոչ այլ ինչ գտանի. եթէ ոչ ցաւ և հեծութն վն որդւոյն մարիամու։

Չորրորդ մասն։ Եմուտ յն և սկսաւ երկարապէս աղօթել. և եղեն քրտունք որպէս ՚ի մարմնոյ նր, այնքան առատ. մինչ զի հեղոյր առատապէս յերկիր. ուստի իջեալ հրեշտակ յերկնից զօրացուցանէր զնա։

Ահա՛ պատճառն քրտեանն արեան. Ետես մաքրագոյն մտօքն զամ գանակակիծ տանջանսն. զորս հրէայքն ընդդէմ փափկագոյն մարմնոյ նր պատրաստէին։ Ետես զի յուդա կորնչէր. և բազում ևս վն որոց չարչարիւքն ոչ էին ընդունելոց։

ընդունելոց զպտուղ չարչարաց նր։ Եւտես զի բազումք չարք քրիստոնեայք մեղօք և ապերախտութեամբ առ ոտսէրն կոխելոց զՏր արիւնն նր։ Արդ զայսոսիկ ամ մինչ մօտ երևեցոյց ինքեան, սկսաւ տարրական նիւթն խառնակիլ· մարմին ցայտեալ ամենուստ արտաքս եհան զքրտունս արեան։ Արդ· մտածեա՛ և տես ով հոգի իմ· թէ որ քան սաստիկ կէր չարչարանքն նն։ Զի եթէ 'ի հեռուստ մտածելն զայս արար· ապա յոր ժամ խսկապէս կրեաց զչարչարանս 'ի մարմնի, ո՞չ սաստիկէր լինելոց։ Հայեաց և տես մտացդ աչօք զայն անծայրն երեսն արեամբ և տղմով աղտոտեցեալ· Տես թէ ո՞չ գարշելի հրեշտակապետացն մեծաւ հոգսունակութեան ծառայէ և մխիթարէ զնա՛· զի կարասցէ յօտնկալ։ Ո՛վ տէր իմ յս քս· այդ ընդմխուանդագոյն աղօթն քո դատապարտէ զիս վն մեղկութեան աղօթելոյս։ Հայեաց ով հոգի իմ յաղօթելն քր և ամաչեաց· զի ոչ միայն զքրտունս արեան· այլ ոչ ևս զկաթ մի արտասուաց հեղուս յաղօթս։

## Աղօթք՝ շնորհակալութեան ն՟ց վասն չարչարանաց նորա·

Ո՛ գեղեցկագոյն քան զամ որդիս մարդկան·

կան . զի որդ այդ քան տգեղացար մարմնով առ 'ի բառնալ զտգեղութիւս հոգւոյ . վերստուորեցար վն անօրէնութե մերոյ . և եղեր զուարակ անուշահոտ պաջի յաւիտենականի փառացն հօր ։ Զայսմ արարեր առ 'ի դարձուցանել զցասումն նո 'ի մեզ և առ 'ի բազմեցուցանել զմեզ յերկնայինն հանգիստն ։ Արդ . ո՜վ բարի յս . զորպիսի շնորհս քեզ մատուցից ես անարժան հողս և մոխիրս ։ Զինչ արդեօք վն փրկութե իմոյ պարտէիր առնել և ոչ արարեր ։ 'Ի թաթ ոտիցդ մինչև 'ի գագաթ գլխոյդ զ-քեզ 'ի ջուրն չարչարանաց ընկղմեցեր . զի զիս անտուաստ հանիցեիր ։ Վս որոյ արժանիես դր յս . որ մեռար և ազատեցեր զմեզ արեամբ քով . առնուլ զշնորհութի փառք և պատիւ - քեզ երկրպագանեմ Ճշմարտիդ Այ . 'ի քեզ յուսամ . և զիս 'ի քեզ յանձն առնեմ ։ Արա վն իմ մահուան քո . զի մեռանիցիմ ըստ մարմնոյս . և կայցեմ ըստ հոգւոյս ո՜վ փրկիչքմ . և Այ իմ ։

## Մտածմունքն չորրորդ ի վերայ չոր չորրորդին Քի .

Յաղագս մտածմունքեանն ցաւերոցն .

Յորժամ աւարտեաց որն զաղօթն աւեցաշակերտան . արէք երթիցուք ահա մերձեցաւ,

մերձեցաւ, որ զնա մատնելոցն է։ Յոր ժամ իմացաւ յն՟ ՚ի հրեշտակէ թէ հօր Այ կամքնէր զի մեռանիցէր իսկոյն աքսո րեաց յինքենէ զամ երկիւղն. և տեսեալ զմատնիչն. ոչ փախեաւ. ո՟պ զվարձկան. ոչ ևս թաքեաւ, այլ ո՟պ զբարի հովիւ. Եւ ընդ առաջ մարդակերպ գայլոյ։ Մտածեա զայն բանն զոր տէրն ասաց։ Արիք երթիցուք. Արիք. զի յուդա՛ ոչ թողլ տայ ձեզ ննջել։ Եկայք և ա ռէք զ յետին օրհնութիւն իմ. զի այս է ժամն յորում ինձ պարտէ մեռանիլ։ Ահա ես երթամ մեռանիլ վն՟ ձեր. իսկ ձեզ յանձնեմ զսրտամաքին մայրն իմ մա րիամ. զոր պարտէք մխիթարել։ Զայս ասացեալ գրկեաց զաշակերտսն և արձա կեաց։ Մտածեա թէ որ քան զարտա սուս հեղուլ պարտէին նոքա առաքեալքն. կամ որ քան պաղատէին ողբալ վն՟ գուժա լի համբուրոյ այտորիկ.

Մասն երրորդ. Եւ մինչև զայս խօ սէր. ահա՛ միոյն յժբանիցն եկն. և ընդ նմին ամբոխ բազում սրօք և բրօք. որ մերձեցաւ առ յն՟ և ասաց. Ողջ լեր վարդապետ և համբուրեաց զնա. իսկ յն՟ պատասխանեալ ասաց ցնա։ Վն՟ որ եկիր բարեկամ։ Մտածեա. զի յուդա՛ որ յառաջնէր առաքեալ. և առնէր

զհրաշս

զհրաշս ո՛չ զայլ առաքելական. եղև զկուսն և առաջնորդ սատանայի ժողովոյն։ Տես թէ որ քան զժուարին է անկումն նց. որք ժամանակ ինչ որբաբարիցեն կենցաղաւորեալք և առեալք իցեն զմեծամեծ շնորհս յայ։ Տես զբարութին յն այսորիկ. գ. եղանակօք, նախ թոյլ տայ յուդայի մերձենալ առ ինքն։ Երկրորդ. կոչէ զնա բարեկամ. որ թէպէտ ոչ էր բարեկամ սակայն եթէ յուդա կամիցէր. յն պատրաստէր առնել զբարեկամութին։ Երրորդ. ցուցանէ նմա զչարութին մեղաց նր կարճառօտ բանիւ ասելով։ Համբուրիւ մատնես զորդի մարդոյ. Արդ աստ մխիթարիր հոգի իմ. քանզի. եթէ այսպէս սիրով վարի յն ընդ թշնամւոյն. ապա զինչ ողորմեսցէ քեզ. եթէ ծառայիցես նմա։ Եւ և՛ս զայս առնելով ուսուցանէ քեզ. թէ ոչ է պարտ չարախօսել զթշնամւոյն. և խօսաբար վարել ընդ նմա. այլ պարտա ցուցանել սէր նմա։ Տես թէ որպիսի զայս.

Մասն երրորդ. Ասէ յն ցամբոխն. Զո՞ խնդրէք. ասեն. Զյն նազովրացին. Ասէ յն. Ես եմ։ Զայս լսեալ ամբոխին. չոգեալ յետս զարկան յերկիր։ Մտածեա հոգի իմ թէ որ քան զանազանութին գտանի ի մէջ հնոյն և նորոյն ազգամայ.

ադամայ։ Զի հինն ադամ յորժամ լուա-
զձայնն ո՛յ դատաստանին։ Ադամ ուրես·
թաքեաւ· իսկ նոր ադամն ք͠ս ընդ ա-
ռաջ ելանէ· և յայտնէ զինքն նշ͠ ասելով·
Ես եմ։ Արդ եթէ ձայնս այս այդքան
քաղցր։ Ես եմ· ահաբեկեալ սարսափե-
ցոյց զյուդա՛ և զզինուորսն· ապա զինչ
է առնելոց յաւուրն դատաստանին ձայնն
այն։ Երթայք յինէն անիծեալք։
Տես զանպատմելի ահըն ք͠ի դէպ 'ի յա-
ւաքեալսն· զի մոռանալով զվիշտն իւր·
միայն հոգայ զն͞ն ասելով ցզինուորսն։
Եթէ խնդրէք զիս· թոյլ տուք դոցա
երթալ։ Ամաչեաց ով հոգի իմ· որ մի-
այն վ͠ քոյ· այլ ոչ վ͠ այլոյ ուրուք հո-
գաս· ով թէ դու միայն իցեիր յաշ-
խարհիս։

## Աղօթք·

Ո՜վ քաղցրագոյն տ͠ր իմ յ͠ս ք͠ս· որ վ͠
իմ անարժան մեղաւորիս· ետուր
զմարմին քո հարուածողաց· և զերեսդ
քո ո՛չ դարձուցեր յապտակողաց։ Եղեր
գին հոգւոյ իմոյ· և պատարագ փրկա-
կան։ Իրաւի զցաւս մեր դու բարձեր·
և զմեղս մեր դու տարար։ Աղաչեմ զքեզ
վ͠ այնորիկ սիրոյ քոյ· որով զիս ամբա-
րիշտս սիրել հաճեցար· մինչ զի ետուր
զքեզ առ 'ի գանիլ· առ 'ի ձաղել· և

առ 'ի խաչէլ. ոմն զի պատուականաւ մա
հուամբ քով. զմահն հոգւոյս ազատի
ցեիր. պատուականի արեանն քոյոյ հեղ
մամբ. զաղտս հոգւոյս լուանայցեիր.
դառնութեան լեղւոյն ըմպելոյն զքաղց
րութին յաւիտենականի կենին ինձ առ
բուցանիցեիր. կապանօք քովք տր յն,
զկապանս մեղաց իմոց խզիցեիր. վիրօք
որք մարմնոյ քո. զմմ վէրս իմ բժշկից
եիր. Նա և թուքն, ձաղանն. ապտակն.
փշեայ պսակն. բևեռքն. գեղարդն. Նա
խաւարինք խաչին. և տագնապ մահուան
քո. զի 'ի համայնից տանջանաց դժոխոցն
ազատիցեսն. և մասնակից զիս յաւիտենա
կանաց փառացն առնիցեսն կատարեալ
զայս ամ տր յն որով հետև զայս քան.
և զայսպիսի կրեցեր վն իմ. առ 'ի հասա
նիլեմ յայսոսիկ խոստմունս, զի դու ես
տր իմ և այ իմ, որ կեաս և թագաւորես
'ի յաւիտեանս յաւիտենից. ամէն.

## Մտածութիւն. Է: Երրորդ Ի վերայ չորեքշաբթոյն օրն. Յաղագս ըմբռնման տն.

Յայնժամ կալան զանմեղադրոյն զառն այն զյն քս. և արկին զնա 'ի բանտ. բայց ո՞ կարէ լեզուաւ

լեզուաւ պատմել. կամ ո՞ կարէ գրչաւ գրել. թէ զոր քան. կամ զորպիսիս տան ջանս կրեաց մեղրածորանն յն. նախ քան զորկանելն զնա 'ի բանտ։ Ո՜հ թէ ո՞չ գազանաբարոյքն այնոքիկ յարուցեալ 'ի վր̃ ան մեղ գաւառոնն սկսան պատառա տել զն̃ք մարմինն նր̃։ Ո՜հ թէ որ քան բանցիս ետուն. որ քանիցս ոջտացահարե ցին։ Ոմանք փետէին զհերսն. ոմանք քարշէին զմօրուսն. ոմանք արկանէին զհող զգլխովն։ Ոմանք ապտակէին զայն ծծայրին երեսն։ Ոմանք կապէին զհրա շարար ձեռան այնքան պինդ. մինչ զի արիւն յորդառատ հեղանիւր 'ի ձեռաց։ Ո՜հ ողբալի ճաշակ. Ո՜հ ագալի տեսու թին։ Արդ. զինչ առէիր արդեօք ով հոգի իմ. եթէ յայնժամ անդ էիր եղեալ. և տեսանէիր զայս նմ̃ անդ մարմնաւոր. աչօք զոր այժմ տեսանես աստ մտաց աչօք։ Զինչ առէիր արդեօք ով հոգի իմ. յորժամ տեսանիցէիր բարձեալ և բեւռեցեալ տուամբ և շղթայիւք զա եղծողն երկնի և երկրի. որ միայն կարէ ազատել զմեզ յամենից կապանաց։ Զինչ առէիր, եթէ տեսանէիր ո՜չ զգող զմերկանեցեալ նա, որ եկն առնել բառ նալ զմեղս աշխարհիս։

Ատան երկրորդ. Պետրոս եհատ զա կանջն

կանչըն մաղքոսին. իսկ յն առողջացոյց.
յետոյ առ ամբոխն ասաց. Եկեալք էք
ըմբռնել զիս, որպէս զգող. բայց այս է
ժամն ձեր. և կարողութիւն խաւարաց.
Աստ. Գ. իրք գոն զարմանալիք. Նախ
քո բարութիւն. որ ոչ չարեաւն զչար այլ
չարին զբարի հատուցանէ առողջացու-
ցանելով զականջն մաղքոսի. Երկրորդ.
խստութիւն նոցա. որք տեսանելով զայն եր-
կուս մեծամեծ հրաշս. ոչ կամեցան դառ-
նալ 'ի մեղաց. Երրորդ. զարմանալին է
անճառ խոնարհութիւն քո. որ ոչ միայն
էառ զկերպ ծառայի. ոչ միայն նմանե-
ցաւ մեղաւորաց. այլ և տուաւ 'ի ձեռս
իշխանացն խաւարաց, այսինքն դիւաց,
որպէս զի 'ի ձեռս պաշտօնէից իւրեանց
ընդ դէմ անմեղագոյն գառին, զոր ինչ
կամին առնիցեն Եւս յոր տուաւ 'ի
ձեռս դիւաց, բայց այսու պայմանաւ.
զի մի կարիցեն զրկել զնա՛ 'ի կենաց.
բայց եծայինն յն մատնեաց զինքն 'ի
ձեռս նոցա. որպէս զի ոչ միայն տանջեցիւր,
այլ և մեռանիցիւր 'ի ձեռս կամարար
պաշտօնէիցն նոցա. Այժմ տես ով մեղա-
ւոր հոգի իմ. թէ որպիսի ստորնագոյն
խորս խոնարհութեան էջ վն քո այն մեծ
ային բարձրութիւն. իսկ դու ոչ կամիս
խոնարհիլ ով հող և մոխիր. այլ կամիս

հանդոյն

հանդոյն սատանայի բարձրանալ։

Մասն երրորդ. Յայնժամ աշակերտքն թողեալ զյս. փախեան ամենեքեան։ Ո՛վ հոգի իմ հայեաց 'ի սիրականն քո յս, տրտում և միայն. Թողեցեալ յաշակերտաց. և շրջապատեցեալ 'ի թշնամեաց։ Ո՛հ թէ որ քան ցաւագին սրտիւ կարէիր ասել ո՛վ իմ բարի յս։ Հայէի յաջմէ տեսանէի. և ո՛չ ոք յաշակերտաց ճանաչէր զիս. զի ամենեքեան փախեան յինէն։ Ո՛ւր է այն մեծ խոստմունքն քո ո՛վ պետրոս. որ սակաւ ինչ առաջ ասացեր։ Եթէ ամենեքեան գայթակղեսցին սակայն ես ո՛չ գայթակղիմ. Զի եղև քեզ որ այդ քան 'ի հեռուստ հետևիս, եւ ընդ առաջ. և սփոփես զսակաւիկ մի զվարդապետն քո։ Վա՛յ ինձ ապերախտիս. զի բազմիցս նմանեցայ ես աշակերտացս այսոցիկ, քանզի մինչ պատահին գործառութիւնք իմք ըստ հաճոյից իմոց. և քանի որ աջողին իրքն ըստ կամաց իմոց. ծառայ եմ քո ուրախ դիմօք. բայց յորժամ ո՛չ յաջողին ըստ կամաց իմոց. յայնժամ հեռանամ 'ի բարեաց գործոց և յյս։ Մինչ ունիմ յաջողս իմ զարտասուս և զքաղցրութիւն սրտի կամիմ աղօթել. իսկ յորժամ ած զայսոսիկ բառնայ յինէն. իսկոյն յաղօ

Թելս

թելոյ դադարիմ։ Տես ո՛վ հոգի իմ. թէ որ քան մեծէ զօրութիւն աղօթից. քանզի եթէ ոչ էին ննջեալք. այլ յաղօթսէին կացեալք ըստ հրամանի տն որ ասաց. Յաղօթս կացէք ոչ փախիցէին. և ոչ թողլցէին միայն զվարդապետն իւրեանց.

## Աղօթք.

Նայեաց ո՛վ տր. հայր տր ամենակալ, 'ի մեղուցեալ ծառայս քո. զոր տրն իմ յո՞ քո. և որդին քո միածին. իւրով պատուականաւ գնեաց արեամբ։ Ահա՛ ձայն արեանն քո աղաղակէ առ քեզ 'ի խաչէն հայցելով զթողութիւն մեղաց իմոց։ Հայեաց յերեսս օծելոյ քոյ, որ նստի ընդ աջմէ քո. և բարեխօսէ վս իմ. վս նր լուր ինձ հայր երկնաւոր որ լսեաց քեզ. և հնազանդ եղև քեզ մինչև 'ի մահ, և մինչև 'ի մահ խաչին։ Բժշկեա՛ հայր տր զվէրս իմ. զի աղաչեմ զքեզ վս վիրաց նր. որ զվէրս իւրս ոտք զբերանս արարեալ. Նոքօք աղերսէ զքեզ վս իմ։ Ո՛վ հայր. Իրաւ զի մեղայ քեզ. և մեղք իմք բազումք են յոյժ։ Իրաւ զի ևս միածին որդին քո մեռաւ առ 'ի քաւել զմեղս իմ։ Արդ կշռեա՛ զմեղս իմ ընդ արդեանցն մահուանն որդւոյ քոյ և տես. եթէ մեղք իմք բազումք և ծանունք

նուանք են քան զարդիւնսն մահուան որդ-
ւոյ քոյ. զնս դատապարտեմ 'ի դժոխս.
զոր մեղօք իմովք արդիւնաւորեցայ ։
Իսկ եթէ արդիւնք մահուան նր ծա-
նուանք և բազումք են քան զմեղս իմ.
անցո՛ զինև զմեղս իմ։ Օրհնեսցէ զքեզ
լեզու իմ. գովեսցէ զքեզ բերան իմ. օփ
քեսցէ զքեզ սիրտ իմ. և երկիրպագցէ
քեզ հոգի իմ. վն առատ ողորմութեն
քոյ 'ի յաւիտեանս յաւիտենից. ամէն.

## Մտածութիւն. Ը. Երորդ.

Յաղագս տանելոյն զՔրիստոս ի
տունն Աննայ քահանայապետին.

Յայնժամ ածին զՔս 'ի տունն
Աննայ քահանայապետին. և ան
տուեալ 'ի տունն Կայիափայու.
Ասէ քահանայապետն ցՔս.
Երդմնեցուցանեմ զքեզ յած
կենդանին. զի ասասցես թէ դու ես
որդին այ։ Ասէ Քս. այո՛ ես եմ. Նախ
լռեաց Քս և ոչ ետ պատասխանի. զի ոչ
էին արժանիք պատասխանւոյ. զի յա-
ռաջն ասացեալ էր ինքն. Մի տայք
զսրբութիւն շանց. Երկրորդ, առ 'ի տալ
մեզ զօրինակ համբերութեն. Զի նախ
'ի

'ի ատեանն Աննայի բազումք սուտ վկայե ցին զնմանէ և նա ոչ պատասխանեաց. և այսու եցոյց մեզ. թէ պարտ է լռել և համբերել չարաբանութե. իսկ յոր ժամ երդմնեցուցին զնա յանուն այ. յայնժամ ոչ լռեաց. այլ պատասխանի ետ և ասէ. Ես եմ որդին այ, թէպէտ գիտէր զի այսու պատասխանատրութբ կատաղելոցէր քահանայապետն. Եւ այ սու ուսոյց մեզ. թէ յորժամ անար գանքն վն մեր միայն են. պարտ է լռել և համբերել. իսկ առ 'ի պատուել զա նուննն այ. պարտ է զճշմարիտն ասել. թէպէտ անտուստ հետևիցի մահ և չար չարանք. Բնասի ասա մտածեա ով հոգի իմ. թէ որ քան հեռի ես 'ի շաւղէն քի. Զի յորժամ աչակերտն. որդին. և ծա ռայքն քո վշտացուցանէ զքեզ. մեծա պէս պատժես զնս. իսկ յորժամ տեսա նես զնն անցեալ զպատուիրանաւն այ. յայնժամ ոչ հոգաս.

Մասն երկրորդ. Ասաց տէրն մեր ցքահանայապետն և որք անդ կային. Ամէն ասեմ ձեզ. տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեն այ. Զոր լուեալ քահանայապետն. պա տառեաց զհանդերձն իւր և ասէ. Հայ հոյեաց. Մահապարտ է. Մտածեա զպատճառս.

զպատճառս․ Թէ վ՟ն էր ասաց յ՟ս զբանս զայս։ Ղ,ալս առ 'ի յայտնել զ՟ոճութին իւր, և կամէր ասել այսպէս․ Թէպէտ այժմ աստ անսանէք զիս անարգ․ և ար համարհեցեալ․ սակայն եկեսցէ ժամանակ, յորում նստցիմ ընդ աջմէ հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Երկրորդ․ ո՞չ զի լսելով զանուն դատաստանին ա՟յ․ դադարից էին 'ի չարութենէ իւրեանց։ Ո՛հ թէ ո՞չ նմանիս այսոցիկ քարասրտից ո՛վ հոգի իմ․ որով հետև լսելով քո զահարկու օրն դատաստանին ոչ վախես․ ո՞չ թէ դատաստանն այն ոչ է լինելոց վ՟ն քո։

Մասն երրորդ, Յայնժամ ամենեքեան սկսան թքանել յերեսն․ ծածկէին զերեսն․ ձաղէին զգլուխն և ասէին։ Մարգարէացիր․ ո՛վ է որ հարկանէ զքեզ։ Ո՛հ զարմանալի խոնարհութիւն․ Ո՛վ հիանալի համբերութիւն որդւոյն ա՟յ։ Ասա՛ ինձ ո՛վ յ՟ս նազովրեցի․ ո՛վ գեղեցկութիւն հրեշտակաց, թքանելոյ երեսոքէր երեսն քո․ Ո՛հ ցաւոյս․ յորժամ մարդիկ կամին թքել․ շրջեն զերեսս իւրեանց․ և թքեն յանարգագոյն անկիւնն տան․ Բայց քայքայեալ փլեցի պալատն կայիափայ․ ուր ոչ գտանի տեղի անարգագոյն քան զճածայլն երեսն քո, առ որ ամենեքեան

նեքեան Թքանեն: Արդ. որ ով հետև այսքան խոնարհեցաւ ածն փառաց, զի որդ ոչ խոնարհիս դու ով հող և մոխիր

Չորրորդ մասն. Ցետ այսորիկ մտածեա ով հոգի եկ իմ զքաղում տանջանս, և զանհուն չարչարանս. զորս կրեաց երկնաւոր փեսայն քո յն: Զի զկնի Թքելոյն յերեսն և բազում նեղութեն. զոր 'ի տունն կայեափայու յայն մէկ գիշերի կրեաց. տուաւ 'ի պահեստ 'ի ձեռն զինուորացն մինչև ցառաւօտն: Բայց ո՛ կարէ պատմել. կամ ո՛ կարէ գրել զնեղութին, զոր յայսմիկ գիշերի կրեաց յն նազովրեցին. Քանզի այն անողորմք զինուորքն զծաղրանսնելն, և զձաղելն զնա համարէին զբօսանս. և տանջելն զնա, հանգստութին իւրեանց համարէին. Ո՛հ թէ զոր քան ապտակս ետուն նմա. Ո՛հ թէ քանիցս անգամ տարածեցաւ յերկիր առ 'ի ննջել և հանգուցանել զջախջախեցեալ մարմինն իւր. բայց անգութք զինուորքն ոչ տային զհանգիստ: Ո՛հ գիշեր գազանաբարոյ. ո՛հ ան հանգիստ գիշեր. յորում ո՛վ յն իմ ոչ կարէիր հանգչել. ոչ և ո հանգչէին նք, որք զան հանգստութին քո. հանգիստ իւրեանց համարէին: Ո՛վ յն բարի, ով այսորիկ աղաղեր զգիշերն զի 'ի տուընջեան վաս


տակեալք

տակնալք զգայնարանք 'ի նմին հանգի
ցեն. բայց 'ի գիշերիս այսմիկ. յորում
աննա. կայեափաս. և համայնք հրեայք
ննջէին, համայնք զգայարանք քոյք
տանջէին: Զի զոր մարմինդ քո ձաղէին,
զհոգիդ քո մշտանգէին. զձեռսդ քո
կապէին. զերեսդ ապտակէին. 'ի դէմդ
թքանէին. զգլուխդ հարկանէին. և զաչսդ
քո կապէին: Ո՛հ թէ որ քան տարա
ձայնք և անմխութանքէին 'ի գիշերիս այս
միկ ձայնք հրեշտակաց և մարդկան:
Զի հրեշտակք աղաղակէին և ասէին.
տ̃ր. տ̃ր. տ̃ր. տ̃ր զօրութենց. իսկ հրէ
այքն ասէին. 'ի խաչ հան զդա. 'ի խաչ
հան զդա: Ո՛վ հրեշտակք արքայութե̃ն.
ամ̃ արդեօք համբերեցիք, յորժամ տե
սանէիք այսքան անարգեցեալ 'ի յերկ
րի զայն. զոր այդ քան պատուէք 'ի
յերկինս:

## Աղօթք:

Ո՛վ յն̃ ք̃ս գեղեցկութն արքայութեն
երկնից: Զինչ դատապարտութե
բանս արարեր. զի դատապարտեցար
զինչ մեղս արարեր. զի մեղապարտ ե
ղեր: Որպիսի չար 'ի քեզ գտաւ. զի
քարաչար մեռար: Իրաւի դու ոչէիր
արժանի դատապարտութե, իրաւի զոչ
ինչ մեղաց արարեր: Իրաւի ոչ ինչ չար
'ի

'ի քեզ դատ, այլ զգաստապարտութիւն. զմեղաապարտութիւն. և զչարութիւն 'ի յանձն առեր. զի զքո ապերախտս յայսցանէ ազատեցեիր. մ՛ո որոյ տալ քեզ զփառս և զպատիւս. յաւիտեանս յաւիտենից. ամէն.

## Մտածութիւն եօթներորդ.

### Յաղագս տարտամողացն պետրոսին պղեխատոս.

Այր մի անտերոս 'ի որոշն քահանայապետի. առ որ եհարց աղախինն և ասաց: Եւ դու յաշակերտացն քի ես: Իսկ նա՛ երիցս ուրացաւ և ասաց: Ո՛չ ճանաչեմ զնա՛: Տես թէ ո՞րպ պատերազմին' 'ի խոխրան պետրոսի սէրն և երկիւղն ընդ միմեանց: Զի սէրն մլոք դասպետին ստիպէր զնա՛ միաւանիլ ընդ վարդապետին: Իսկ երկիւղ մահուանն զօրէր զնա՛ զի թաքչիցէր: Բայց առ կայն 'ի վախճանն այնքան զօրացաւ երկիւղն. մինչ զի ուրացաւ զնա՛, ո՛չ միայն մի անգամ այլ և երկիցս և երիցս անգամ ասելով: Ո՛չ գիտեմ և ո՛չ ճանաչեմ զայրն այն: Տես ո՛վ հոգի իմ թէ ո՛րքան խոնարհութիւն որդւոյն այ. քանզի. այնքան անարգ համարեցաւ յա՛. մինչ զի պետրոս

պետրոս ո՛չ համարէր զնա արժանի գոլ վարդապետ իւր. այլ մանաւանդ երդմամբ հաստատէ. թէ ո՛չ է աշակերտ նր. Ո՛վ պետրոս պետրոս. իբրու՞ այդ քան անարգէ այրդ այդ. զի ամօթ համարես զքեզ գոլ աշակերտ նորին. Մեծապատճառաւ գանգատեաց յաւաչմէ մարգարէիւն և ասաց. Ես որդն եմ և ո՛չ եմ մարդ. նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդեան. Աստ մտածեա ո՛վ հոգի իմ զչարութիւն հպարտութեն որ պատճառ եղև անկմանն պետրոսի. Զի պարծեցաւ և ասաց. Եթէ ամենեքեան թողցեն զքեզ. սակայն ես ո՛չ թողից. Եւ ևս մտածեա զզօրութին աղօթից. քանզի եթէ պետրոս ո՛չ էր ննջեալ 'ի պարտիզին, այլ անսացեալ էր բանիցն քի որ ասաց. Յաղօթս կացէք. զի մի՛ անկանիցէք 'ի փորձութն. գուցէ ո՛չ էր անկեալ. Երրորդ. տես թէ որ քան պարտիմք անձիւ և զգուշութբ կալ. զի եթէ սիւնն երկնից շարժեալ գողաց. ապա զինչ է. ըննելոց մեզ թշուառացս.

Մտան երկրորդ. Ցետ ուրանալոյն վաղվաղակի խօսեցաւ հաւն. և դարձեալ յետ հայեցաւ 'ի պետրոս: Մտածեա հոգի իմ. թէ որ քան բաղմացաւ վիշան և դառնութիւն սրտին յնր, յորժամ ետես զինքն

զինքն վաճառեալ յուդայէ. Թողեցեալ
յայլոց աշակերտաց. Իսկ այժմ ես այս
քան ողբեղաբար ուրացեալ եղէ 'ի սի
րելւոյ. և 'ի գլխաւոր առաքելոյն.
Իբրու առաւել կսկծացոյց զսիրտն քի.
այս ուրացութն պետրոսի. քան թէ այլք
համայնք տանջանք. Ո՛հ թէ որ քան ցա
ւագին սրտիւ աւեր մշտանգեալն յն.
Այն ուղեի. թէ ով մխիթարիցէր զիս
և ո՛չ գտաւ: Բարեկամք և ծանօթք իմք
հեռիք եղեն յինէն. Մտածեա՛ թէ ո՛չ
'ի խօսիլ հաւոյն շարժեալ 'ի գութ յս,
հայեցաւ 'ի պետրոս. և սկսաւ խօսիլ
ընդ նմա՛ սրտի 'ի սիրտ և ասել: Զի՞ է
պետրոս որ զիս ուրացար, զինչ չար 'ի
յիս տեսեր. ո՞ւր է հաւատ քո. ո՞ւր է հա
ւատարմութն քո. Ո՞ւր է սէրն քո դէպ
'ի յիս. ո՞ւր է այն մեծ խոստումն ոչ եր
բէք թողլոյ զիս. Ո՛չ ապաքէն բաւա
կանքէին ցաւք իմ ինձ. զի և դու եդեր
զցաւս 'ի վր ցաւոցս: Այսէ բարերա
րութին քո. զոր հատուցանես փրկչին
քո. որ հանեալ զքեզ 'ի չնչին արուեստէ
ձկնորսութե, արարի իշխան և գլուխ
բոլոր ժողովրդեան իմոյ: Արդ խորհ
եաց ով հոգի իմ. թէ որ քան մեծաւ
պաշտօնաւ կարէ գանգատել քս զքէն.
և ասել քեզ զոր պետրոսի ասաց:

Մասն երրորդ. Յայնժամ յիշեաց
պետրոս զբանն յի. և ելեալ արտաքս
ելաց դառնապէս: Արդ. ո՞չ յատկու-
թի արեգականնէ հալել զպաղն. և ի ջուր
լուծանել. այսպէս և հայեցուածն Ք՟ի
արեգական արդարութեն. զպաղուցեալ
սիրտն պետրոսի հալեալ դարձոյց ի ջուրս
արտասուաց: Այլ պետրոս և ասէր:
Զինչ կամիս զոր զի արարից: Գոյ առ
դեօք յոյս թողութեն մեղացս: Բախեր
զկուրծն. և ասէր ինքն ինքեան: Զինչ
արարեր ո՛վ պետրոս. զո՛վ ուրացար:
Զո՛վ քամահեցեր. վայ ինձ վա՛յ. զոր
որդի ա՟յ դաւանեցի. զնոյնն ուրացայ:
Որ մինչ զոտս կամէր լուանալ. անար
ժան զիս համարելով ոչ թողլ տայի լուա
նալ. զնոյնն այսօր անարժան համարեցի
թէ վարդապետիմ իցէր ասելով. Ո՛չ ճա
նաչեմ զնա: Ճողէր զմորուսն. ողբայր.
և ասէր: Զինչ արարից եղկելիս: Ուրա
ցայ զտուողն թողութեն. այժմ առ այլ
ո՛ գնացից առ 'ի յառնուլ զթողութիւն
մեղաց: Զինչ պատասխանիս տացից.
աշակերտակցացն իմոց. Ո՟պ հայեցայց
յերեսն մարիամու: Սրտիւք բերանով
ասացից նմա՛, թէ ուրացայ զորդին քո:
Աստ զերկուս իրս ուսանիմք. նախ թէ
ոչ պարտիմք յուսահատիլ վ՟ս բազմութեն
մեղաց.

մեղաց· այլ յուսալ յողորմութեն նր։ Երկրորդ· յորժամ ոք տացէ մեզ զբարի խորհուրդ դառնալոյ 'ի մեղաց· յայնժամ ոչ է պարտ յամենալ այլ շուտով ապաշխարել։ Երրորդ· պարտիմք հեռանալ 'ի տեղւոջէն· և 'ի յընկերացն որք պատճառք եղեն անկման մերոյ հանգոյն պետրոսի· որ ոչ եկաց անդ ուր մեղանչեացն, այլ անտի ել արտաքս և ելաց դառնապէս։

## Աղօթք վս շնորհակալութեան ընծայելոյ Տն· Յաղագս չարչարանաց Նորա։

Շնորհակալ եմ զքեզն Տ՟ր իմ Յ՟ս Ք՟ս· որ վ՟ս իմ եղկելւոյս մեղաւորիս և դատապարտեցեալ մարդոյս, 'ի ձեռն նր չարչարանաց քոց· Թարց արգեանց իմոց ձրի փրկեցեր։ Ո՛վ Յ՟ս քաղցրագոյն· և լոյս աչաց իմոց· կարի դառնէր չարչարանք քո կարի խիստէր տանջանք քո· զոր դու անարգաբար վ՟ս իմ կրեցեր։ Ո՛հ ցաւոյս· զի ես մեղանչեցի· իսկ զապաշխարանս դու քարշեցեր· յանցաւորն ես եմ· բայց զդատապարտութիւն դու յանձն առեր· ես դատայ 'ի չարութենս· իսկ դու ելեր 'ի կախաղանս խաչին· Արդ Տ՟ր իմ Յ՟ս Ք՟ս, որ ով հետև զայդքան արարեր վ՟ս իմ· աղաչեմ զքեզ

տուր

տուր ինձ զշնորհս չարչարանացն քո ։
Զի ինձ միայն բաւական է շնորհն քոյոց
որոց չարչարանաց ․ Թէպէտ զայլ ոչ
ինչ յաշխարհիս ունիցիմ ։ Եւ յայնժամ
տացես ինձ զշնորհ չարչարանաց քոյ ․
յորժամ բորբոքեսցես զսիրտ իմ սիրով
չարչարանաց քոց , յորժամ ոչ զայլ ինչ
մտածիցեմ եթէ ոչ զխաչն քո ․ յորժամ
զայլ ոչ ինչ խոկայցեմ բայց ՚ի վշտաց ,
նեղութեանց և տանջանաց քոց ․ վ՟ն անո
ւան քո տ՟ր , տուր ինձ զսէրն չարչարա
նաց քոց ։ Զի եթէ ունիցիմ զսէրս
այս , յայնժամ թէ ես մերձենայցեն
առ իս ամ՟ն չարիք ուտել զմարմին իմ ․
յայնժամ ոչ երկեայց ՚ի նոցանէ ․ զի
չարչարանք քո ընդ իս են ․ զի նա քան
զամ՟ն թշնամիսն իմ կարողագոյն է ․ և քան
զամ՟ն իմաստունս իմաստնագոյն ․ նա է
վարդապետ ճշմարտութեան ուսուցիչ
խրատու ․ լոյս սրտի ․ մխիթարութիւն վշտա
ցելոց ․ փախուցիչ տրտմութեան ․ արտաք
սիչ երկիւղի ․ անուցիչ ջերմեռանդու
թեան ․ հեղիչ արտասուաց ․ և պատճառ
ամենից բարութեանց ․ Արդ ․ զինչ եմ
թարց նմա ․ եթէ ոչ ծառ չոր և ան
պտուղ տունկ ․ Ով յ՟ս բարի ․ վ՟ն նոյն
չարչարանացն զքեզ աղաչեմ լուր
ինձ ։

Մտածութիւն

## Մտածութիւն. Ը. Երորդ.

### Յաղագս տանելոյն զՔրիստոս առ Պիղատոս. Եւ նոր Եւս ձաղկել զՔրիստոս ի վերայ ատենին.

Երկիցս անգամ վկայեաց պիղատոս զանմեղութիւն քո ասելով: Ես զչար ինչ ոչ գտանեմ յայրն այն: Իսկ հրէայքն աղաղակէին ասելով. Հան ՚ի խաչ. հան ՚ի խաչ: Եւ պիղատոս ետ զնա ՚ի ձեռս զինուորացն առ ՚ի ձաղկել: Արդ տես ո՛վ հոգի իմ. թէ որ քան մեծ է սէրն փինտային քոյ դէպ ՚ի քեզ: Զի ոչ շատացաւ կրելով զձաղանս. զհարուածս զապտակս. զթուքս. եւ զայլ անհուն տանջանան առ ՚ի պատկել զինքն ընդ քեզ. այժմ եւ կամաւ երթայ առ ՚ի կապել ՚ի սիւնն. ՚ի մէջ նր. եւ հեղուլ զարիւնն իւր. Արդ առեալ զինուորացն զՔս. մերկացուցին զնա. կապեցին ՚ի սիւնն եւ շուրջ եղեն զնովաւ. ոմ զկատաղի գայլս եւ առեալք ՚ի մէջ զանմեղադրելն գառն այն սկսան հարկանել զնա ամենուստ: Իսկ յս կայր անմռունչ թարց օգնականութեն, եւ թարց առն ուրուք, որ ցաւակցիցէ նմա. Ո՜հ թէ որպիսի մեծէր վիշտն յի. մինչ

կրէր.

կոծս զինքն մերկ և ամօթալի՝ ի մէջ բազմութեան զինուորաց․ որք էին թուով վեց․ Ճ․ Կ․ և վեց․ Ո՛ արդեօք ոչ զարմանայր տեսեալ զթիկունս այ ձաղանօք հարեալ․

Մասն երկրորդ․ Մտածեա՛ հոգի իմ․ թէ որքան սաստիկ էր ցաւն յի․ Քանզի․ հին օրէնն հրամայէր․ թէ ձաղանաց հարկանումն ոչ իցէ առաւել քան զքառասուն․ ոմն զի ոչ ոք մեռանիցէր ընդ ձաղանօք։ Բայց քանզի զինուորքն պիղատոսի գոլով հեթանոսք ոչ հնազանդէին այսմիկ օրինի, և էին արք անգութք և անողորմք։ Վա՛ որոյ ըստ յայտնութեան սրբոց ոմանց․ Ե․ Ռ․ և վեց էին ձաղկանքն զոր ետուն նմա՛ ՚ի մի սեանն․ Նայեաց և տես մտաց աչօք ո՛վ հոգի իմ և տես զխստաբարոյութիւն մարդակերպ գազանացս այսոցիկ․ թէ ոմն անողորմաբար պատառէին զանմեղ մարմինն որդւոյն այ․ ոմանք շղթայիւք․ ոմանք ջրովք․ ոմանք խարազանօք․ և ոմանք փշովք․ Նայեաց մտաց աչօք, և տես զցաւագնեալ մայրն մարիամ նստեալ յանկիւն մի տխրութեան այնորիկ․ ուր ձաղէին զորդին իւր միածին առաջի աչաց նր․

Մասն երրորդ․ Զկնի այսքան ձաղանաց

Նաց արձակեցին զլո՟ 'ի ոլնէ. և քանզի
մ՟ի բազմաց հարուածոցն և մ՟ի բազում
արեան հեղութենն կորուսեալ էր զուժն.
մ՟ի որոյ յորժամ արձակեցին զն՟ա 'ի
սնէն. անկաւ 'ի մէջ արեանն իւրոյ, ուր
ամ՟ զլին կայր 'ի ներքոյ սեանն կուտա
կեալ. կամէր յոտն կալ և զգենուլ զհան
դերձն. բայց քանզի թուլացեալ էր բո
լոր մարմինն. ոչ կարէր զենքն ուղղել.
այլ քանիցս անգամ ջանայր յոտն կալ.
այն քանիցս դարձեալ անկանէր յերկիր.
մ՟ի որոյ անճարակ լեալ. 'ի ծունկս ան
կեալ սողայր ընդ երկիր. չոք 'ի չոք և
թրևելով զոտս ընդ ինքեան. որոնէր
զպատառատեալ հանդերձս իւր: Ո՛ւրէր
անդ ծառայ զի ծառայէիցէր նմա: Ո՛ւր
գտանիւր բաղանիք յորում լուանայցէր
զարենաթաթախ մարմինն. կամ ո՛ւրէր
անդ այր ոք ցաւակից. որ գթացեալ
'ի նա մխիթարիցէր. կամ սպեղինա
ւիւք դարմանիցէր զվէրս ն՟ո: Այժմ
աստ ինձ ո՛վ ապերախտ հոգի իմ. Թէ
մ՟ի այր կրէ զչարչարանս այս. իրաւի
մ՟ի քո կրէ զայս ա՟մ որդին ա՟յ: Եւ ևս
իմա՛, քանիցս անգամ հակառակիս կա
մացն ք՟ո. այն քանիցս նորոգես զվէրան
ն՟ր. և յայնժամ հակառակիս կամացն ն՟ր.
յորժամ ոչ համբերութե՟ տանիս զնե
ղութե՟ն

զուԹին զոր քեզ առաքէ. այլ դժգոհեալ տրտնջաս ։

## Մտածութիւն. Ը. Երորդ.
## Յաղագս փշեայ պսակին Քի.

Ակսան զինուորքն դարձեալ մերկացուցանել զմարմին ՚ի զգեստուցն իւրոց. և զգեցուցին նմա զքղամիթ կարմիր. և եդին ՚ի գլուխ նր զպսակ փշեայ։ Արդ զինչ առնես ո՛վ հոգի իմ։ Զինչ խորհիս սիրտ իմ։ Զի մ՛արդ լռեալ կաս ո՛վ լեզու իմ։ Ո՛հ ցաւագին մերկիչ իմ։ Ո՛վ տրտմագգեաց սր իմ։ Քանզի տեսանեմ հայիմ յապտակահար և ՚ի Թքաթաթախ երեսդ. քանզի տեսանեմ տեսանեմ զխորանկեալ. և զարտասաւաթոր աչսդ, քանզի անգամ նայիմ ՚ի վէրսք լցեալ մարմինդ, և մտածեմ զանհուն ցաւդ սրտիդ, զարմանամ. Թէ զի՞ մ՛արդ ոչ ճայթի սիրտ իմ ՚ի ցաւոյ. կամ ընդէ՞ր ոչ հանեն աչք իմք զաղբիւրս արտասուաց։ Վա՜յ ինձ տր իմ յի՞ւ։ Ո՛չ էր բաւական արգեօք անցեալ հարուածն. դառըն մահն. Ընդէր կոյ վէրն զի՞ և այժմ կամին վիրաւորել զգլուխ քո. որում մինչև ցայժմ խնայեալ էին։ Ո՛հ Թէ որ քան մեծէր ցաւն

ցաւն յն յայսմիկ մեր կայման։ Զի համ-
դերձքն արենաթաթախք կպեալք էին 'ի
վէրսն մարմնոյն. մի որոյ մինչ սկսան
մեծաւ ցասմամբ մերկացուցանել. ան
ջատեալք համդերձք 'ի մարմնոյն. նորո
գեցան վէրքն։ Եւ եդեալք զփշեա՛
պսակն 'ի գլուխն հարկանէին բրք զփշեա՛
պսակն այնքան յուժով մինչ զի թափան
ցէին փուշքն ընդ գագաթն. և արիւնն
եղանէր առատապէս։

Սատան երկրորդ. Յետ այնորիկ ե-
դին 'ի ձեռս նո զեղէգն մի. և ծունր
կրկնեալ ծաղր առնէին զնա և ասէին։
Ողջ լեր թագաւոր հրէից։ Տես թէ որ
քան բազումք են վիշտքն յն. որով հետև
ոչ ևս վայրկեան մի հանգստացուցանեն
զնա՛ ծունր կրկնելով կատակէին զնա՛
ասելով։ Ողջ լեր թագաւոր հրէից. այ
սինքն ով դու ողորմելի և տկարագոյն
քան զամ որդիս մարդկան. զի արդ
այդ քան խեղագործեցաք. մինչ զի զքեզ
որդի այ և թագաւոր արարեր։ Արդ,
այսու խրատէ մեզ քս. թէ պարտէ
մեզ համբերել ամ նախատանաց։

Սատան երրորդ. Վան զի պիղատոս
կամէր ազատել զնա. կալեալ զձե
ռանէ յն. եցոյց այնու ողորմելի կենօք
զնա՛ ժողովրդեանն և ասէ։ Ահաւասիկ
մարդ։

մարդ. Իսկ ժողովուրդն աղաղակեաց ասելով: Հան 'ի խաչ. հան 'ի խաչ: Տես ով հոգի իմ. թէ որ քան սաստկաբար ձախեցին զՏէրն. որ ով հետև պիղատոս հաւատայր. թէ ողորմելի անսաութին քի պարտէր զիջուցանել զկատաղի բարկութին անողորմ հրէից:

### Մտածութիւն տասն երրորդ.

### Յաղագս տանելոյ զխաչափայտն ի լեառն Գողգոթայ և խաչելոյ.

Արդ՝ յորժամ ետես պիղատոս թէ ոչ կարաց խաղաղացուցանել զբարկութին հրէից. Նստաւ յաթոռ դատաւորութեն. առ 'ի տալ զանմեղ գառն յս 'ի ձեռս թշնամեաց յն. զի 'ի խաչ հանցեն զնա: Կայր արդէն պատրաստեցեալ խաչն 'ի դուռն պիղատոսի ոմ ահագնատեսիլ դրօշակ, որ սպառնայր զցաւագին մահն տն մերում. Իսկ յորժամ պիղատոս էհատ զվճիռն մահուան. յայնժամ. եդին զվէրս 'ի վր վիրացն յն. քանզի եդին զայն ահագին ծանր խաչափայտն 'ի տկարացեալ և 'ի պատառոտեալ յուսն յն. Բայց սակայն ոչ հրաժարեցաւ գթածագոյն յն 'ի խաչափայտէն յորում կային մեղքն մեր ամենեցուն,

ամենեցունց, այլ մանաւանդ գրկեալ
համբուրեաց զնա մեծաւ սիրով. վա
մերկութեն մերոյ: Արդ առեալ զխաչա
փայտն 'ի յուսն երթայ 'ի տեղի մատուց
ման պատարագին որ 'ի սահակ բար
ձեալ տանէր զփայտն ողջակիզին.
Հետևէին նմա բազումք գթածք կա
նայք լալով և արտասուօք: Արդ, ով
էր այնպիսի քարասիրտ. որ ոչ էր լա
ցեալ. տեսանելով զայն մեծ խաչափայտն
'ի վերայ ձաղեալ և տկարացեալ ուսոյն քո.
որ բարձեալ տանէր կամաց կամաց. և
տքալով. դողալով ծունկքն. և մեծա
աշխատանօք, և երբեմն անկանելով յեր
կիր 'ի վերայ երեսաց.

Մասն երկրորդ. Զայս տեսեալ որ
յօհաննէս աւետարանիչն. գնաց առ
'ի ծանուցանել սրբուհւոյ կուսին մարիա
մու. առ որ հասեալ անկաւ յերկիր ող
բայ և ասէ: Ո՜հ տիրուհի հրեշտակաց:
Ո՜հ թագուհի երկնից. Ո՜վ դուռն
դրախտին: Ո՜վ բարեխօս աշխարհի.
Ո՜վ ապաւէն մեղաւորաց. Ո՜վ փրկու
թեն արդարոց. վայ ինձ ով տիրուհի.
Կամիմ ասել զբան մի քեզ. Բայց ոչ
կարեմ ասել. ոչ գիտեմ. Թաքուցանել
'ի քէն ոչ կարեմ. իսկ ասելն դժուարին է.
Ահա տեսի զսիրական որդին քո, և

զքաղցրագին

զքաղցրագին վարդապետն իմ բարձեալ զխաչափայտն 'ի յուսն, և 'ի մէջ երկուց աւազակաց երթայր 'ի լեառն գողգոթայ 'ի խաչել: Զոր լուեալ ոբ կոյսն. յուշագնացեալ անկաւ յերկիր. և ծածկեաց զնա մահուան քրտունքն: Իրաւի մեռանիցէր իսկոյն, եթէ ածային նախախնամութիւն ոչ պահիցէր զնա կենդանի. ով զի առաւել ցաւիցէր սիրտ նր 'ի ներքոյ խաչին առ 'ի առնուլ զմեծագոյն պսակ:

Մասն երրորդ. Արդ. յորժամ 'ի յուշն եկն. ելեալ արտաքս խնդրէր զսիրական որդին իւր. և քանզի ոչ գիտէր թէ ընդ որ ճանապարհ էանց. վն որոյ հարցանէր ցերուսաղեմայ կանայսն և ասէր: Վ՜ ոյ սիրոյն. մի թէ տեսիք զսիրականն իմ. ասացէք ինձ: Իսկ երուսաղեմայ կանայքն ցուցին նմա զարիւնն որդւոյն որ 'ի ճանապարհին կաթեալ էր և ասեն. Ահա արիւնն որդւոյ քո. երթ ուրեմն ընդ արեանդ, և գտցես զորդին քո: Առեալ սրբուհի կոյսն զշաւիղ արեանն գնաց յորոնել զորդին իւր. Եւ ետես 'ի հեռաւուստ զբազմութիւն մարդկանց. և զճառագայթս զինուցն զինուորաց. և լուաւ զձայն փողոյն. որով հրապարակէին զմահն յն. Մերձեցաւ առամբոխն

ռամբոխն առ 'ի տեսանել զախրականն իւր: 'Ի միոյ կողմանէ ցանկայր տեսանել զորդին: Իսկ 'ի միւս կողմանէ վախէր տեսանել զնա 'ի մէջ այնքան անարգանաց: Իսկ 'ի վախճանի յաղթեալ 'ի սիրոյն. գնաց և եկաց յայնպիսի տեղւոջ յորմէ կարէր տեսանել զնա 'ի հեռուստ զի ոչ թոյլ տային մերձենալ: Ետես յա զմայրն իւր. և յաւելան ցաւքն որդւոյն տեսանելով զցաւագին մայրն այնքան վշտանգեալ: Արդ. լռեալքէին լեզուքն մօրն և որդւոյն վն սաստիկ ցաւոյն. Բայց խօսէր որդին սրտէ 'ի սիրտ և ասէր: Վա՜յ էր եկիր այսր. ո՜վ աղաւնի իմ: Սիրական իմ մայր իմ: Ո՜չ ապաքէն բաւականքէին ցաւք իմ ինձ. իրաւի առաւել ցաւիմ վն քո. քան թէ վն մարմնոյս ցաւոյն. ցաւք իմ բազմացուցանեն զցաւս քո. իսկ ցաւք քո առաւել ցաւեցուցանեն զիս:

## Մտածութիւն մահուան եղբօր.
## Յաղագս խոնարհութեան ծն

Արդ. յորժամ ժամանեցին 'ի լեառն գողգոթայ. դարձեալ մերկացուցին զնա 'ի զգեստուն: Բայց քան զի

զի հանդերձին կպեալ էր 'ի վէրսն. 'ի մերկացուցանելն նորոգեցան ամ վէրքն. և հեղանիւր ամենուստ արիւնն: իսկ յս մեծաւ համբերութեբ թոյլ ետ մերկանալ. և ոչ բանայր զբերան իւր. Արդ. տարածեցին 'ի վր խաչին առ 'ի բևեռել զձեռս և զոտսն: Բայց քանզի ծակքն խաչին հեռի էին. և ոչ հասանէին ձեռքն. առեալ զպարան կապեցին 'ի ձեռն. և քարշեցին դէպ 'ի ծակսն այնքան սաստիկ. մինչ զի խախտեալք յօդուածք բազկացն 'ի տեղւոջէ իւրեանց. հազիւ հասուցին 'ի ծակսն. և իսկոյն սկսան. հարկանել զկռանն 'ի բևեռսն. Ո՜հ թէ. որպիսի էր ձայնն կռանացն յականջս ցաւագին մօրն. իւրաւ. թէպէտ բևեռքն այնոքիկ թափանցէին 'ի ձեռն որդւոյ. սակայն վիրաւորեալ խոցոտէին զսիրտն մօրն:

Մասն երկրորդ. Զկնի բևեռմանն իսկոյն բարձրացուցին զխաչափայտն. և զյս 'ի վր խաչին. և եդին զխաչն 'ի փոսին. զոր այսր աղագաւ փորեալ էին: Ո՜հ անմեղ յս. որպիսի սիրտ եղիցի սիրտն այն որ ոչ պատառեսցի վս սաստիկ ցաւակցութեն. զի որով հետև քարինքն ևս ճայթէին ցաւակցելով քեզ. ապա՛ ուրեմն քան զքար ապառաժ է. այն սիրտն որ ոչ ցաւակցի քեզ: Շուրջ եղեն զքև

Երկուեքն

Երկունք մահու. Թէ իմ յն և վիշտք դժո
խոց գտին զքեզ. Իջեր դու 'ի խորս
անդնդոց. և շրջանք գետոց պաշարեցին
զքեզ: Հայրն երկնաւոր եթող զքեզ:
Աշակերտք քո փախեան 'ի քէն և շուրջ
զքև զոչ ոք ունիս եթէ ոչ զթշնամիսդ
միայն: Իրաւի որ ցաւագին մայր քո
ընդ քեզ է 'ի ներքոյ խաչին. բայց ո՛չ
մխիթարէ զքեզ. այլ մանաւանդ քա
նիցս անգամ տեսանես զնա՛ հեծալով
ոմ ղողանի այն քանիցս յաւելանան
ցաւք քո: Կակուղ անկողինն քո է չոր
փայտն խաչին: Կակուղ բարձն քո է
փուշ պսակն: Համեղ կերակուրք է լե
ղին. և անուշահամ գինին քո է քացախն:
Յորժամ առ 'ի հանգուցանել զձեռսդ
կանգնիցես 'ի վ̃ն ոտիցդ. սաստկանայ
ցաւն ոտիցդ: Իսկ մինչ կամիս հանգու
ցանել զոտսդ և կախիս 'ի ձեռացդ. յայն
ժամ բազմանայ ցաւն ձեռացդ:

Մասն երրորդ. Բազմացան տան
ջանք և ցաւք յն ներկայութեն մօրն
իւրոյ: Զի բարուոք գիտէր որ սիրտն
մարիամու ընդ ինքեան ի խաչ ելեալ էր
և կայր 'ի տանջանս ընդ մարմնոյ իւրում:
Զերկուս խաչս ունիս վ̃ն քո ով տէր յն.
մինն է չարչարանաց. իսկ միւսն է ցա
ւակցութեն. Խաչն չարչարանացն տանջէ
զմարմինդ.

զմարմինդ․ իսկ խաչն ցաւակցութեն չարչարէ զսիրտդ։ Խաչն չարչարանաց տանջէ զմարմինն քո երկաթեօք բեեռօք։ Իսկ խաչն ցաւակցութեն խեղձ մօրն քում թափանցէ ցաւօք 'ի սիրտ քո։ Ո՛հ թէ ո՛ կարէ պատմել զտանջանսն սրտի քոյ․ յորժամ տեսանէիր զցաւագին մայրն քո 'ի ներքոյ խաչին արտասուաթոր աչօք․ թալկացեալ սրտիւ․ և կիսամահ մարմնով։ Իրաւի իրաւի․ առաւել չարչարէր զքեզ ցաւակցութիւն քո դէպ 'ի մարիամ․ քան թէ խաչն և բևեռքն զմարմինդ․

## Մտածութիւն երկոտասաներորդ․ Յաղագս իջուցանելոյ զՔս ի խաչէն․ և յաղագս թաղելոյ նորին․

Արդ․ յորժամ աւանդեաց տէր մեր զմաքրագոյն հոգի իւր․ յայնժամ կատարեցաւամ իղձ և փափագանք հրէիցն թշնամեացն քրի․ սակայն ո՛չ շիջաւ տակաւին կատաղի սրտմտութիւն նց․ այլ և կամեցան արտաքսել զցասումն իւրեանց ընդ դէմ սրբագոյն նշխարացն մնացեալ մարմնոյ նորայ։ Քանզի․ մի ոմն 'ի զինուորացն տիգաւ

տիգաւ. խոցեաց զսրբագոյն կողն նո
յորմէ ել վաղվաղակի ջուր և արիւն։
Ո՜հ անողորմութեն ձեռուն։ Ո՛հ անած
ութեն ձեռուն։ Ո՜վ գազանաբարոյք.
ո՜վ խստասիրտք. թուի ձեզ թէ սակաւ
տանջանս կրեաց 'ի ձեռնջ 'ի կենդանու
թեն. զի ոչ խնայէք սպանեալ մարմնոյն։
Համբարձ զաչս քո. ո՛վ հոգի իմ. և
նայեաց յերեսն սիրական փեսային քոյ.
և տես զա՛ն լուսափայլ երեսն բոլորո
վիմբ գեղնեալ. զաչս խփեալ. բերանն
փակեալ. և զգլուխն կորացեալ. հայեաց
և ցաւակցեա՛։ Նայեաց յայն ածային
կողն խոցեալ յորմէ բղխէ արիւն և
ջուր և ասա՛։ Ո՜վ գետ քաղցրահամ
բղխեալ 'ի դրախտէն որ ոռոգանես զե
րեսս երկրի. արբո՛ զիս զծարաւեալս։
Ո՜վ խոց կողին քո. որ մանաւանդ սի
րով իմով. քան թէ գեղարդեամբ խոցե
ցար. խոցեա՛ զսիրտ իմ սիրով քով։ Ո՜վ
դուռն երկնից. լուսամուտ արքայու
թեն. մոյծ զիս քև 'ի յերկինս։ Ո՜վ տեղի
անդորրութեն, թաքո՛ զիս 'ի միջի քում։
Ո՜վ աշտարակ ամրութեն. պահեա՛ զիս
'ի փորձութենէ։ Ո՜վ բնակութիւն արդա
րոց. գերեզման պանդխտաց։ Բոյն մաք
րից աղաւնեաց. և ծաղկազարդ մահճ
հարսին սողոմոնի։ Ողջ լեր ո՛վ խոց կո
ղին

զին քեզ, որ խոցես սիրով զհոգիս արգասոց և վիրաւորես սիրով զսիրտ ջերմեռանդիս։ Ողջմեր ծով գութան սրտին յն․
և վկայ մեծագոյն սիրոյ նր։

Մասն երկրորդ․ Երկեալք դեպ 'ի յերեկոյեան ժամն յորժամ օրն տարաժամեալ էր երկու որք այլքն այնոքինեք․ այսինքն յովսեփ և նիկոդիմոս․ որք եդեալք զսանդուխտն առ խաչն, իջուցին զմարմինն յն։ Յորժամ ետես նա կոյսն․ Թէ իջուցանեն զմեռեալ որդին իւր 'ի խաչէն, պատրաստեաց զինքն առ 'ի յընդունել զնա 'ի գրկացն խաչին 'ի գիրկս իւր և առ 'ի հանգուցանել զնա 'ի ծոցի իւրում որպ 'ի նաւահանգստի։ Աղաչէ մեծաւ խոնարհութեամբ զյովսեփ և զնիկոդիմոս ասելով։ Արով հետև մինչ աւանդեր զհոգին ոչ կարացի գրկել և տալ զվերջին համբոյրն․ գոնէ տուք ինձ մեռեալ․ զի մի ամենևին բաղմացին ցաւք իմ։ Որդ առեալ․ կոյս զմեռեալ մարմինն 'ի գիրկն իւր սկսաւ լալ և ողբալ դառնապես։ Լային հրեշտակք լային երկինքն։ Լային աստեղքն և ամ տեղծուածք։ Սկսաւ գրկել զխոցոտեալ մարմինն 'ի ծոցի իւրում։ Եդիր զերեսն իւր 'ի մէջ փուշ պսակին․ քսէր զերեսն իւր առ երեսն որդւոյն։ Երեսն

մոր

մօր թրջի արեամբն որդւոյն. և երեսն
որդւոյն թրջի արտասուօքն մօր։ Սգայ
մայրն և ասէ. Ո՛վ որդի իմ. Երանի էր
աւուրն այնմիկ յորժամ ցերեկն քարող
էիր. իսկ երեկոյին եկեալ առիս, սրբէի
զքրտունսն քո։ Յորժամ նստէաք 'ի սե
ղան մոռանալով զմարմնաւոր կերա
կուրն. հոգևոր բանիւ զիս յագեցուցա
նէիր։ Յորժամ մեռանէին որդիքն այ
լոց. գային առիս. ես աղաչէի զքեզ.
և դու յարուցանէիր զմեռեալսն. արդ
ես զո՞վ աղաչեցից. զի յարուսցեն զքեզ
'ի մահուանէ։ Եկայք առիս ո՛վ որդի
յոհաննէս. ո՛վ մագդաղենացի։ Եկայք
և տեսէք. այսէ արդեօք որդին իմ քաղ
ցրագոյն։ Այս է որդին իմ զոր այնքան
ուրախութ̃բ ծնայ։

Ժամն երրորդ. Լայր յոհաննէս աւե
տարանիչն և ասէր։ Ո՛վ տէր և վար
դապետ իմ. ո՛վ արդեօք ուսուցանէ
ինձ զբանն կենաց։ Ո՛վ ինձ յայտնեսցէ
զխորհուրդս երկնից։ Ա՛ռ ով երթայց
առ ի լուծանել զտարակոյսս իմ։ Որպի
սի փոփոխութիւն է այս. երէկ երեկունն
ունէիր զիս 'ի վ̃ր լանջաց քոց. և հաղոր
դէիր ինձ զխորին խորհուրդս երկնից։
Իսկ այսօր ես ունիմ զքեզ մեռած 'ի
ձեռս իմ։ Այս է արդեօք երեսն այն

զոր տեսի այլակերպեալ 'ի լեառն Թաբօր․ որ քան զարեգակն պայծառագոյն էր։ Նայր նմանապէս մարիամ մագդաղենացին․ գրկէր զոտսն ձո․ օգայր և ասէր։ Ո՛վ լոյս աչաց իմոց․ և կեանք հոգւոյ իմոյ․ եթէ ծանրանայցեմ մեղօք․ ո՛վ զիս արձակեսցէ 'ի մեղաց։ Ո՛վ բժշկեսցէ զվէրս հոգւոյ իմոյ։ Եթէ սիմոն բորոտն փարիսեցին զիս բամբասիցէ․ ո՛վ պատասխանեսցէ փոխանակ իմ։ Ո՛հ թէ որ քան զանազանաբար շօշափեմ զոտս այսոսիկ․ յանցեալ ժամանակն մինչ արտասուօք լուացի զայսոսիկ առ 'ի կեանս հոգւոյն իմոյ․ իսկ զտուօղն կենաց շօշափեմ այսօր մեռած վծ սիրոյ իմոյ։ Ո՛ տացէ զի և ես մեռայց ընդ քեզ։

Արդ հասեալ ժամ թաղմանն․ եդին զսրբ մարմինն 'ի կտաւի․ և այսպէս օգալով տարեալ եդին 'ի գերեզմանի․ զպատուական գանձն այն։ գերեզմանն ծածկեցաւ քարով․ իսկ սիրտն մարիամու ծածկեցաւ միգաւ տրտմութե՛։ Որոյ մաքուր բարեխօսութե՛ն արժանաւորեսցուք զմեզ ամենեսեանս տեսութե՛ն լուսոյ որդւոյն միածնի․ որ կեայ և թագաւորէ ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ․ ամէն։

Խրատ յաղագս Երրորդ տասնելոյ զմտածողական աղօթին.

Արդ, նախ քան թէ ուսուցանեմք զկերպն բարւոք առնելոյ զմտածական աղօթն. ասասցուք զզանազանութիւն աղօթից։ Ամ ոք որ կամի քրիստոնէաբար կեալ. փրկել զանձն իւր 'ի գժոխոց երթալ յարքայութիւն. խոտորիլ 'ի չարէ և առնել զբարի. ամենևիմք պարտէ միաւորիլ ընդ այ. և ունել զսէրն այ։ Եւ զայս միաւորութիւն և զսէրն այ, ոչ ոք կարէ ստանալ այլ ուրեք կերպիւ. եթէ ոչ աղօթիւք. ոպ տեսցի 'ի յառաջաբանութեն այսորիկ գրքոյս։

Երկու կերպէ աղօթք. այսինքն. ձայնաւոր, և մտածական։ Ձայնաւոր աղօթքն է սաղմոսն. հաւատով խոստովանեմ. հայր մերն. ողջոյն մարիամ։ և այլ նմ աղօթք որք ասին բերանով և ձայնիւ. և զայսպիսի աղօթս հասարակաբար ամենեքեան ասեն։ Իսկ մտածական աղօթքն 'ի մէջ հայոցս. կամ յունաց ոչ ոք գիտէ վն ոչ ունելոյ զգիրք և զուսուցիչ։ Բայց սակայն մտածական աղօթքն առաւել գեր 'ի վերոյ է. պատո

ւորկանագոյն և շահաւէտ ։ Եւ կարեմք ասել թէ որ քան պատուականագոյն է հոգին քան զմարմինն. այնքան պատուականագոյն է մտածական աղօթք քան զձայնաւորն ։ Եւ զայս պատուականութիս մտաւորական. կամ մտածական աղօթից ցուցի սկիզբն գրգոյս. յորժամ գրեցի զջերմեռանդութէ. ուստի ոչ է հարկաւոր միւսանգամ կրկնել զնոյնն ։ Այլ միայն ասասցուք զկերպ և զեղանակն, թէ ո՞նց պարտիմք առնել զմտածական աղօթքն ։

Ով որ առնէ զմտածական աղօթքն. պարտէ ունիլ. և սահմանել զժամանակ ինչ յատուկ վ͞ս մտածական աղօթից. յառաւօտն կամ յերեկոյն ։ Զի յորժամ սահմանես քեզ զժամանակ յատուկ յառաւօտն. կամ յերեկուն. Նոյն ժամանակն ախպեցէ զքեզ 'ի յաղօթն ։ Զոր օրինակ ոմն մարդ մի որ ունի զյատուկ ժամանակ ուտելոյ. յորժամ այն ժամանակն գայ քաղցնու. և կամի ուտել. յորժամ որ ունի զժամանակ յատուկ քնելոյ երբ ժամանակն այն գայ կամի քնել ։ Այնպէս և յորժամ ունի ցիս զժամանակ յատուկ վ͞ս. առնելոյ զմտածական աղօթքն. յորժամ գայ այն ժամանակն աղօթելոյ, նոյն ժամանակն

յաղթէ

յաղթէ զքեզ և ստիպէ յաղօթել· զի այ-
սորիկ լաւ է ընտրել զժամանակ մի զի
մտածականաբար աղօթելոյ· յառաւօտն
կամ յերեկոյն: Բայց սակայն բարեգոյն
է աղօթքն առաւօտեան ժամոյն քան զե-
րեկոյեանն: Վասն զի 'ի ձեռն գիշերայ-
նոյ քնոյն· սպառին ամ ծուխք և գոլոր-
շիք կերակրոց· նա և մոռացեալ լինին
համայնք իրք· զորս տեսանէ և լսէ
մարդ 'ի յաւուրն· որք են պատճառք
ցնդելոյ զմտաց մարդկան· 'ի ժամ աղօ-
թիցն:

Երկրորդ· այնոցիկ որք մտածակա-
նաբար աղօթեն· շատօգուտ է ունիլ
զտեղիս առանձինս· հեռի 'ի ձայնէ և 'ի
յաղաղակէ· զի ձայնն և աղաղակն խա-
փանեն զաղօթն: Բարւոք է և փակել
զլուսամուտս և կալ 'ի մութն տեղի· զի
որ քան մութն է տեղին ուր աղօթես·
այնքան լուսաւոր եղիցի աչքն մտացդ.
Իսկ եթէ ոչ կարես ունել զտեղի մութն.
փակեա զաչս քո 'ի մտածութեն: Եւ և
եթէ ոչ ունիս զտեղի անքոյթ· յայն
ժամ բարւոք առնես յառնել յառաւօտն·
յորժամ ամենեքեան 'ի քունն են· զի զայս
առնելով եղիցի տունն քո որպէս անա-
պատ· Թէպէտ իցեն անդ· Ճ· մար-
դիկ:

Երրորդ· պարտիս 'ի ժամ մտածական աղօթիցն արտաքսել 'ի քէն զամ խորհուրդս և զայնս որք ոչ են մեղք մահացուք· այսինքն զամ հոգս աշխարհիս· ուտելոյ խմելոյ· ծախելոյ· և կատակաբանաց։ Զի մտածմունքն այս պիտանացս թէպէտ ոչ են մահացուք մեղք, սակայն խափանեն զաղօթն·

Չորրորդ· ամենևին պարտէ մաքրել 'ի մահացու մեղաց· և 'ի ներքին մեղաց ազատել կամաւ։ Զի առ 'ի բարւոք աղօթել մտածմամբ, պարտէ ունիլ զհամարձակութիւն առ նմ։ Բայց որ կայ 'ի մեղս, ոչ կարէ ունել զնր համարձակութիւն առ նմ· Ուստի որ կայ 'ի մեղս· եթէ ոչ կարէ խոստովանիլ· պարտէ նախ զաղօթելն զղջալ 'ի մեղաց· և ունիլ զդիտաւորութիւն խոստովանելոյ·

Հինգերորդ մտածարար աղօթօղն· Նախ քան զաղօթելն· պարտի նախապատրաստել զինքն որպէս ասէ հոգին սբ. սողոմոնիւ։ Նախ քան զաղօթսն պատրաստեա զհոգի քո։ Եւ դու այսպէս արա·

## Յաղագս Նախապատրաստութեան .

Յորժամ յառնես առաւօտուն յանկողնոյդ . վաղվաղակի համբարձ զմիտդ առ Ած կարճագոյն աղօթիւք և ասա՝ Ած իմ . ես առ քեզ առաւօտ առնեմ . Ած օգնել ինձ նայեաց և տր յընկերել ինձ փութայ . զայս ասա . կամ զնմանիս սոցա . Եւ յորժամ զգենուցուս զգեստդ . շնորհակալ լեր զայ վն ամ բարութեն . և զամ բարեգործութիս զոր արարցես յաւուրն այնմիկ մատո՛ այ . և խոստացիր նմա՛ . զամ արարմունս քո որ ոչ է մեղք . 'ի փառս նր առնել .

Յետ այսորիկ ընթերցիր զմասունս մտածական աղօթիցն ։ Եւ աստ պարտիս գիտել . զի ամ մտածմունք յերիս մասունս բաժանին . վն այսորիկ յամ մտածական աղօթս ասի ։

Մասն երկրորդ . մասն երրորդ և այլ ։ Արդ՝ պարտիս ընթեռնուլ զերիս մասունս 'ի միասին . բայց ոչ պարտիս մտածել զերեսեանն 'ի միասին . այլ զմինն զկնի միւսոյն ։ Նախ պարտիս մտածել զառաջին մասն և լաւ որոշալ զնա՛ . լինի թէ անդ գտցես զարտասուս և զկակղութն սրտի և մինչ մտածես

ծես զառաջին մասն. մի խոկար զերկ
րորդն. և ոչ զերրորդն. մինչև որ լաւ
քննես զառաջինն ։ Նա եթէ յառաջ
նումն ոչ գտցես զհամ և զճաշակ յայն
ժամ յառաջնոյն. անցիր առ յերկրորդն.
և լաւ քննեա. և մտօք ծամեա զերկ
րորդն. իսկ եթէ և ս երկրորդն ոչ տայ
քեզ շքաղցրութիւն. ապա անցիր առ յեր
րորդ մասն ։ Բայց ոչ է պարտ 'ի միոյ
մասանէ շուտով անցանել առ միւս
մասն. այլ պարտ է մտածել մէկ չերեք
սահաթ 'ի վր առաջնոյ մասին. մէկ չե
րեք ևս 'ի վր երկրորդ մասին. և միւս
այլ 'ի վր երրորդին որպ զի բոլոր աղօթքն
քո հասցէ երեք չերեք սահաթ ։ Բայց
ոչ ասեմ թէ աւելի քան զերեք չերեք
աղօթելն վատիցէ. երանի թէ. Է. սա
հաթ կարիցէ իւր աղօթել. Բայց սա
կաւ ասեմ. զի մի ձանձրանայցես.

Դարձեալ պարտիս գիտել. յորժամ
ընթեռնուս զմասունս մտածական
աղօթից. մի ընթեռնուր փոյթ ընդ
փոյթ. այլ մտադրօրէն և հանդարտա
պէս ։ Դարձեալ ոչ է պարտ այնքան
ընթեռնուլ. զի զամ 'ի միտ առցես. որպ
մանկունքն սերտեն զսաղմոսն. այլ բա
ւական է երկու, կամ երեք անգամ ըն
թեռնուցուս մտադրութբ. զի կարիցես
զգլխաւորսն

զգլխաւորսն 'ի միտ առնուլ. ապա փա
կեսցես զլուսամուտն և մտածիցես ։
Բայց եթէ ոչ կարես 'ի միտ առնուլ.
յայնժամ կարես սակաւ մի ընթեռնուլ.
և զընթերցածդ մտածել և մտօքդ ըղ
ձալ։ Սակաւ մի այլ ընթեռնուլ. և
զնոյն մտածել. դարձեալ սակաւ մի ըն
թեռնուլ և դարձեալ մտածել մինչև
շնորհօքն հոգւոյն սրբոյ սովորեսցիս առ
նել զմտածական աղօթսն ։

Եւ աստ գիտելի է. զի այսօրիկ ամ
մտածական աղօթքն բաժանեալ է
յերեք մասունս. զի եթէ ոչ գտցես
զհամ և զճաշակ 'ի միում մասում. այս
ինքն յառաջնում գոնեայ գտցես 'ի միւ
սում. այսինքն յերկրորդում և յերրոր
դում։ Վասն աստի թէ. ոչ է պարտ ան
ցանել շուտով 'ի միոյ մասանէ առ միւսն,
առանց բարւոք քննելոյ։ Այսպէս առ
նեն աշխարհի մարդիկք. որք 'ի միոյ
մսէ պատրաստեն զզանազան կերակուրս.
զի եթէ ոք ոչ հաճիցի 'ի մինն. գոնեայ
հաճիցի 'ի միւսն ։

Դարձեալ պարտ է գիտել. զի վասն այ
սորիկ գովի մտածական աղօթքն.
զի զնա՛ շարժէ 'ի մարդսն ։ Այսինքն.
յորժամ մտածեմք զմեղաց չարութիւն.
շարժի 'ի մեզ խղճն ատելոյ զմեղս ։
Յորժամ

Յորժամ մտածեմք զմահն զդատաս
տանն. և զդժոխսն. յայնժամ շարժի 'ի
մեզ ահ և երկիւղ վյ ո՛չ կամիմք մեղան
չել. առ 'ի՛ չ երթալ 'ի դատաստանն մե
ղօք, և ո՛չ 'ի դժոխսն վն մեղաց. Յորժամ
մտածեմք զփառս երկնից արքայութեն,
յայնժամ շարժի 'ի մեզ սէրն արքայու
թե, և ցանկութի հասանելոյ այնր:
Յորժամ մտածեմք զբարերարութին այ,
որ միշտ մեզ առնէ յայնժամ շարժի 'ի
մեզ խղճ շնորհակալ լինելոյ զայ, վն այս
քանից բարերարութեց. և այլն: Ուստի
ասեմ թէ, այս խղճս ուր և ունիցիս ,
անդ կաց. յորում տեղւոջ աղօթող քում
այսպիսի խորհուրդ և քաղցրութի գայ
ցէ քեզ. անդ կացիր և անտուստ մի շար
ժիր. Եթէ այսպիսի բարի խորհուրդ
գայցէ քեզ յառաջնում մասոջն աղօ
թից, անդ կացիր, թէ և մնասցես անդ
բոլոր ժամանակն աղօթից: Զի պտուղն
աղօթից յայսպիսի խորհրդս, և յայս
խղճս կայանայ: Ուստի յորժամ ունիցիս
զայսպիսի բարի խղճ և զբարի խորհուրդ
յառաջնում մասին, անդ կացիր որ
քան որ մնայ բարի խղճս 'ի բարի խոր
հուրդս այս. Մի ասեր թէ մնաց մտա
ծելոյ զերկրորդ և զերրորդ մասն. Զի
վն այսպիսեաց ըղձից մտածեմ զերկրորդ
և

և զերրորդ մասն. վո՛յ յորժամ գայցուք
զպայսպիսի բարի խորհուրդս, անդ պար
տիմք կալ. և ոչ շարժիլ քանի որ այն
քաղցր իղձն և բարի խորհուրդն մնայ
առ մեզ։ Այսպէս և յորժամ կաս
ասել. ՂԸ. ողջոյն մարիամ, եթէ 'ի
սկսել բանին և առաջին ողջոյն մարիա
մին ա̃ծ քեզ տայ զբարի խորհուրդ. և
զքաղցր արտասուս, մի անցաներ անտ
ուստ յայլ տեղի և ասել. ՂԹ. ողջոյն
մարիամն այլ կաց և մնայ զի լաւ աղօթքն
այն է, զոր ա̃ծ քեզ ետ յառաջնումն.
Ճ. ողջոյն մարիամին. Անդ կացիր այն
չափ, որ չափ մնայ այն քաղցրութիւն.
իսկ յորժամ ոչ մնայցէ, ապա թէ մտա
ծեալ, կամ առա զմնացեալն. Զոր օրի
նակ, դու կամիս երթալ. Ճ. ղօնախ
տեղ առ 'ի ունիլ զզօրաւոր դեղ վ̃ն հի
ւանդութն քո. իսկ դու հասանել 'ի մէ
ղօնախ անդ. ճարեցեր զճարտար բժիշկ
և դեղ որով կարես առողջանալ, սակայն
ոչ է պարտ թողուլ զայնդեղն զոր գտեր.
և երթալ. Ճ. ղօնախին. զի դու վ̃ն դե
ղոյ երթայիր անդ. և այժմ գտեր առ
ընթ ոչ է հարկաւոր երթալ անդ.
Այսպէս և, մեք առնեմք զաղօթս մտա
ծական առ 'ի ունիլ զբարի իղձ. զբարի
խորհուրդ. զխոնարհութն սրտի. և զքաղցր
արտասուս.

արտասուօ. վասն յորժամ զայսոսիկ ոչ կարեմք ունիլ յառաջնում մասում, պարտիմք ունենել յերկրորդումն. և եթէ ոչ ունիցիմք յերկրորդումն, պարտիմք ունիլ յերրորդումն. ուստի մինչ այս տայ մեզ ամ յառաջնում մասում, կամ ուր և իցէ, անդ պարտիմք կալ քանի որ կայ, և յորժամ չունէ 'ի մեզ այսպիսի բարի իղձն, ապա պարտիմք անցանել առ միւսն. Այսպէս առնէ մեղուն, զի մինչ նստի 'ի վր ծաղկի միոյ, որ քան որ մեղր կայ, ոչ թողու զնա, իսկ յորժամ սպառի մեղրն յայնժամ թողեալ զայն երթայ առ այլ ծաղիկ. Այսպէս առնէ պարտիզպանն, որ մինչ ոռոգանէ զարծուն, ոչ բառնայ զջուրն մինչև արբցէ յոգ։ իսկ յորժամ յագի արծուն առեալ 'ի նմանէ, տանի զջուրն յայլ արծու, և այլն։

Ոանիր ընթերցող եղբայր, այս վերոյ ասացեալ խրատն յոյժ շահաւէտ է և հարկաւոր։ Բայց լուր զխրատս այս, որ է առաւել հարկաւոր առաւել օգտակար, և առաւել պիտանի։ Արդ. ով 'ի վերոյ ասացի, մտածական աղօթքն զոր սուրբ վարդապետք գովեն և մինչև յերկինքն բարձրացուցանեն, զի մաքրէ զմիտս. և զզգաստացան բարի խորհուրդ և զառաջնա

զուարճագրութն ներհեղու 'ի սիրտս մարդկան. Բայց պարտիմք չուսով կատարել զնոյնն. Զոր օրինակ. յորժամ մտածեմք զխոնարհութեան. այսինքն, յորժամ Քս լուաց զոտս աշակերտացն. Երուի մեծ իղձ շարժի 'ի մեզ խոնարհութե, և ցանկամք խոնարհիլ. Արդ, պարտիմք յատկացուցանել զայս իղձ խոնարհութե. այսինք ոչ է բաւական առնել հասարակօրէն, թէ ես կամիմ այսուհետև խոնարհ լինիլ. այլ պարտիմ այնմիկ աւուր առնել գործ իմն խոնարհութե. այսինքն վն խոնարհութեն համբուրել զերկիր. գնել զպապուշս ուրուք. և այլն.

Ա Դարձեալ յորժամ մտածես զՔս աղօթելն վն թշնամեաց իւրոց, յայնժամ Ած տայ քեզ զմեծ փափաք առնելոյ բարիս թշնամեաց քոց. Արդ ոչ է բաւական հասարակաբար առնել. թէ ես ոչ կամիմ չարին զչար հատուցանել. այլ պարտիս յատկացուցանել. այսինքն պարտիս ջանալ յաւուրն այնմիկ բարիս առնել թշնամւոյն քում. և եթէ հեռի է և ոչ կարես տեսանել. յայնժամ պարտիս աղօթել վն նր.

Բ Դարձեալ. յորժամ մտածես զայն սոսկալի բանն Քի որ յաւուրն դատաստանին

տաստանին ասասցէ ցդատապարտեցեալսն. Երթայք յինէն անիծեալք։ Զի քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել։ Ցայնժամ մեծ սէր շարժի 'ի քեզ առ 'ի ողորմել աղքատաց։ Արդ. ոչ է բաւական հասարակաբար տալ. Թէ կամիս այսուհետև ողորմած լինիլ. Այլ պարտիս զօրինով կատարել զայդ բարի խորհուրդդ, եթէ կամիս սովորութիւն առնել քեզ. ապա թէ ոչ. ոչ կարես սովորել բարիս առնել. Վ͞ն այսորիկ զձեզն ցիկ և զպատուական օրինակ մի տամ. վարդապետ ոմն Ռոդրիկվէց կոչեցեալ յիսուսեան կարգն, իրաւի օրինակս այս վայելուչ է ըստ մեծի սրբութ͞ե և մեծի իմաստութ͞ե իւրոյ. որ ասէ այսպէս ։ Յորժամ երկաթագործն, կամ դարբինն կամին չինել զինչ իմն անօթ երկաթեայ, սկսեն եռացուցանել զերկաթն հրով և յետոյ բախէ զեռացեալ երկաթն և չինէ զանօթն. զոր եթէ 'ի պաղդոյն բախիցէ, կոտրեսցի երկաթն ։

Արդ. չոր երկաթէ սիրտն մեր, որ չորացեալ է ընդ դժնութ͞ե ոչ Պօղոս ասէ ։ Հաճիմ ընդ օրինին Աճյ, բայց տեսանեմ զայլ օրէն յանդամս իմ, որ ընդդիմանայ օրինին Աճյ. Ուստի թէպէտ գիտեմք զի բարին հաճելի. պահելն. բարիս

բարիս առնել ատելեաց մերոց, և օրհ-
նել զանիծիչս մեր, սակայն ոչ կարեմք
դիւրաւ առնել. զի չորացեալ է սիրտ
մեր. Բայց յորժամ մտանեմք 'ի հնոցն
մտածական աղօթից, յայնժամ յեռայ
սիրտ մեր, և կակղի հրովն հոգւոյն որ
բոյ. Եւ յայնժամ կակղի սիրտ մեր,
յորժամ այն առաքինութիւն որ արտա-
քոյ աղօթիցն դժուարին թուէր, սկսէ
քաղցրանալ և համեղ երևիլ մեզ. և ցան-
կամք առնել և գործով կատարել. Եւ
յորժամ այսպէս կակղանայ սիրտն մեր,
յայնժամ պարտիմք կռանաւ բախել
զյեռացեալ և զկակղացեալ սիրտն մեր.
Եւ յայնժամ կռանաւ բախեմք զսիրտն
մեր, յորժամ զոր ինչ յաղօթն առաջադ-
րեցաք առնել. զնոյնն 'ի գործ ածիցեմք
և գործով կատարեսցուք արտաքոյ աղօ-
թիցն. Կարի չորացեալ է սիրտ մեր,
մինչ դժուարին երևի մեզ բարիս առնել
ատելեաց. և օրհնել զանիծիչս մեր.
Բայց յորժամ մտանեմք 'ի հնոցն մտա-
ծական աղօթիցն, և մտածեմք զբանն
քի որ աղօթեաց վն խաչհանողացն. յայն-
ժամ յեռայ սիրտն մեր և կակղի. զի
դիւրին և քաղցր երևի զբ· րի առնել
ատելեաց մերոց, և օրհնել զանիծիչս
մեր. և յայնժամ կռանաւ բախեմք զյե-
ռացեալ

տացեալ և զկակղացեալ սիրտն մեր, յոր ժամ զայս բարի խորհուրդս՝ զոր յաղօթն յղըցաք, զնոյնն գործօք կատարեմք· Եւ քանիցս անգամ 'ի գործ ածեմք, զայնքան կուանս հարուածս սրտից մերոց։ և առնեմք զպատուական տաճարքն· Արդ, Թէպէտ գրեցի աստ զսակաւ ինչ խրատ 'ի մտածական աղօթից· սակայն գլխաւոր ուսուցիչն է հոգին սր։ Հաւատայ, հաւատայ, եթէ յամենայնում աւուր առնիցես զայս մտածական աղօթս, 'ի սակաւ աւուրս զայն բարին ունելոց ես և տեսանելոց, զոր ակն ոչ ետես· և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ։ Հաւատայ ինձ եղբայր· եթէ հաւատարմաբար արասցես զայս մտածական աղօթս, զայնպիսի խորին խորհուրդս երկնիցես իմանալոյ, զորս ոչ կարեն իմանալ այնք ա՟ծաբանք, որք Թէպէտ ուսեալք են զա՟ծաբանուԹն, սակայն ոչ առնեն զմտածական աղօթս։ Եւ աչօք իմօք տեսի զձկնորս մի, 'ի մեծն Նապօլի որ էր գաւեհիկ աշխարհական մի, և էր յոյժ աղօթարար։ Սա այնքան լուսաւորեցեալէր հոգւով 'ի ձեռն մտածական աղօթիցն, մինչ զի վարդապետք երթային առ սա, և հարցանէին զնորա դժուարինս· և նա այնքան

կատարելապէս

կատարելապէս պատասխանէր, մինչ դքե զարմանային ամենեքեան ։

Վախճան ·

## Աղօթք Առաւօտեան ·

Յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ · ամէն ։

Թագաւոր Թագաւորաց ամենաստեղծող իմ և արարիչ հայր և իմ հոգի, երրորդութիւն և միածնութիւն, զքեզ խոստովանիմ բոլորով սրտիւ իմով գովանիմ և երկրպագանեմ, որ յոչնչէ գոյացուցեր զիս, որ ստեղծեր զհոգի և զմարմին իմ, և ամ բարեօք զիս զարդարեցեր, պահեցեր, պահպանեցեր, սիրեցեր · և նախախնամեցեր, տածեցեր, և սփոփեցեր, յամենայն վտանգի ինձ օգնական եղեր և յամենայն կարևորութեան ինձ 'ի Թիկունս հասեր, յամ տրտմութեն զիս մխիթարեցեր, և յամ փորձութենէ զիս ազատեցեր, և մինչև ցայս կէտս պարաւանդեցեր, տեսանելով զանօրէնութիւնս իմ ներեցեր · զապերախտութիւնս իմ և չարից արարեր, և առաւել քան զբազումս որք զարգիւնս ունին առաւելս նմանութեն քոյ պաշտպանեցեր ։

նեցեր, և յայս ժամ առաւօտու ժամա նեցուցեր, փառք և գոհութիւն և երկր պագութիւն և շնորհակալութիւն ստեղծո ղիդ իմոյ այ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. միոյ, ճշմարտի, կենդանւոյ, և յաւիտենականի. ամէն.

Ողջոյն քեզ Մարիամ. լի շնորհօք տէր ընդ քեզ, Օրհնեալ ես դու 'ի կա նայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ յս, սրբուհի Մարիամ մայր այ, աղօթեա վն մեր մեղաւորացս այժմ և 'ի ժամու մահուան մերոյ. ամէն.

Հայր մեր որ յերկինս ես, սբ եղի ցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո եղիցին կամք քո ոպ յերկինս և յերկ րի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, ոպ և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. ամէն.

Գոհանամ զքեն տէր իմ և այ իմ 'ի բոլորէ սրտէ իմէ, և 'ի բնաւից մտաց իմոց, զի 'ի գիշերիս յայսմիկ արժա նի արարեր զիս պահել և պահպանել. վն քոյոյ մեծի գթութեանդ և բարերա րութեանդ, արդ աղաչեմ զքեզ խոնարհու թբ, տուր ինձ զմնացեալն շնորհ քո տէր, առանց որոյ զոչ ինչ կարեմ առնել. զի նովաւ

Նովաւ կարիցեմ կատարել զնա այ-
սօր· 'ի փառս քոյոյ ա̃ծայնոյ հանգիստ
վեհութեանդ 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ, և
'ի յօգուտ մերձաւորաց իմոց։ Ա̃ծ և օգ-
նեա՛ ինձ ով քաղցր Տ̃ր իմ զի կարիցեմ
այսու հետև սկսանիլ զբարիս խորհիլ·
խօսիլ, և գործել, և փոխել զկենցաղա-
վարութիւն իմ անպատեհ, և առնել զա̃մ
ինչ 'ի պատիւ և 'ի փառս անուան քոյ
սրբոյ· ամէն։

ԱՑԾ յաւիտենական, 'ի խորոց սրտի իմոյ
գոհանամ զքէն, զի ստեղծեր զիս
'ի պատկեր քո, և պատուական արեամբ
որդւոյ քոյ միածնի փրկեցեր, և անթիւ
բարերարութեամբ քով մինչև ցայսօր մար
դասիրապէս պահպանեցեր, և յայսմ գի
շերիս 'ի վտանգից և 'ի չարեաց զիս պա
հելով մինչև 'ի յսկիզբն աւուրս այսորիկ
ամբողջ հասուցեր։ Զինչ փոխարէն
հատուցից քեզ Տ̃ր ընդ այսոցիկ, և ընդ
այլոց ամենեցուն զորս ետուր ինձ։
Ահա՛ Տ̃ր զանձն իմ բոլորովին ընդ բնա
ւից զօրութեանց և կարողութեանց։ ընդ
բաւից ըղձից և ցանկութեանց, և ընդ բնա
ւից խորհրդոց բանից և գործոց նորին
յօժարութեամբ քեզ մատուցանեմ և նուի
րեմ 'ի մեծագոյնս փառս անուան քոյ
սրբոյ· ամէն։

Վերընծ

Վերընծայեմ ես ընդ նմին զա՟մ գործս, զորս փրկիչն մեր կատարեաց սիրով վն փրկութե՟ մերոյ 'ի վր երկրի. զի յառաւելութե՟ արդիւնաւորութե՟ց նորին ընդ որ հաճեցար, զօրանայցէ տկարութի իմ, և լնանիցի պակասութիւն իմ։

Որոյ և միջնորդութեամբն աղերսեմ 'ի քէն ուսուցանել ինձ զքոյդ բարեհաճութի, քանզի գիտեմ տր, թէ գալոց իցես մեծաւ քննութեամբ պահանջել զհամարս 'ի ծառայից քոց․ և սաստուազարհուրի սիրտ իմ 'ի բնաւից յանցուածոց իմոց 'ի խորհրդին իմ, թէ զորպիսի դատաստանս ընդունելոց իցեմ 'ի քէն, և ոչ եմ հաւաստի, թէ յորում ժամու գալոց իցես, առ 'ի խնդրել զհաշիւն տնտեսութե՟ իմոյ․ Վն որոյ ապաւինեալ 'ի շնորհս քոյս, աղբաղանս յառաջադրեմ ինձ կենցաղավարել այսուհետև ըստ հաճոյից քոյ ա՟ծայնոց, և ըստ պատեհաւորութե՟ կոչման իմոյ․ Իսկ զի հրամայէ մեզ որդին քո միածին նախ խնդրել զարքայութի քո տր, ուստի ամփոփեցից և արտաքարշեցից զմիտս իմ 'ի բազմաց և յաւելորդաց զբաղմանց կենցաղոյս, զի մինուաղեսցի ժամանակն հոգալոյ զկեցութե՟ անձին իմոյ, որով հետև ընդու-

ընդունայն իմն է շահիլն զաշխարհս ամեն
և զանձն իմ կորուսանելն.

Տ͞ր իմ և ա͞ծ իմ, երանի թէ այսօր յաջողեցին ճանապարհք իմ 'ի պահել ինձ զարդարութիւնս քո։ Իսկ արդարև ոչ է պատեհ գնալ 'ի ճանապարհս մեղաւորաց, և 'ի շաւիղս դժուարինս, յորս ոչ ինչ գտանի, եթէ ոչ զղջումն և թշուառութիւն, քանզի թէպէտ 'ի յսկզբանն երևին բարիք և հաճելիք, սակայն կատարած նոցին առածէ ի մահ. ուստի երդուայ և հաստատեցի 'ի պահել զիրաւունս արդարութեան քոյ. և ասացի թէ պահեցից զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով. դարձուցից զաչս իմ, զի մի տեսցեն զունայնութիւն. Երանի թէ զգուշութեամբ պահիցէ զսիրտ իմ, զի ոչ լքանիցի 'ի բարեպաշտութեան քումն, արդ որով հետև այսպիսիք եղեն ինձ բազմիցս առիթք մեղանաց, ոչ ևս զնոցանէ այսօր և 'ի բոլոր կենանս իմ զբուռն հալից. ոչ արարից ա͞ր մ͞ռ աչերոյ քոյ. որում միայնոյ հաճոյանալ, ծառայել, և հպիլ ցանկայ անձն իմ։ Արդարև ա͞ր զինչ օգուտ է կամիլն զայս, եթէ ոչ դու տայցես զկարելն և զկատարելն. քանզի 'ի զուր մարդ հաստատէ 'ի մտի խորհում, եթէ ոչ շնորհ քո կարգադրիցէ զնա.

զնա։ Դու գիտես Տէր զտկարութիւն իմ, զի աղքատ և ողորմելի եմ, և ոչ ինչ առանց քեզ առնել կարեմ, և ոչ ես խորհիլ զինչ, այլ 'ի քէն միայնոյ է բաւականութիւն իմ։ Արդ արի և օգնեա ինձ, և կատարելագործ շնորհիւ քով զօրացո զիս, զի զոր կամիմ զբարին յաջողութեամբ կատարելոյ կարող լինիցիմ։ Իսկ դու ամենասրբուհի կոյս մարիամ, ապաւէն իմ և յոյս, օգնեա ծառայի քում, մայրականաւ քոյով գթութեամբ։ Այսպէս և դու հրեշտակ իմ պահապան, որ հրամանաւ Աստուծոյ բարձրելոյն ընկալեալ ես զհոգաբարձութիւն անձին իմոյ, լուսաւորեա և կառավարեա զիս այսօր, և առաջնորդեա 'ի ճանապարհս կեցութեան, 'ի խորոց սրտի իմոյ հեզութեամբ մտաց աղաչեմ զքեզ ով գերապայծառ հոգի հրեշտակական, իշխան արքայութեան, որ ես կարգեցեալ 'ի ժամու ծննդեան իմոյ յամենառատ աղբերէ հանդիսավեհութեանն Աստուծոյ, 'ի պահպանութիւն և 'ի նախախնամութիւն իմոյ անարժանիս անձինս, պահեա և պահպանեա զիս այսօր 'ի պատրանաց, և 'ի խաբէութենէ, և 'ի հնարից սատանայի, և տուր ինձ զօրութիւն նշանի սրբոյ խաչին յաղթահարել զամենայն ցանկութիւն մարմնական, զամենայն հպարտութիւն կենցաղոյս,

և

և զամ խաբէութիւն հնոյ օձին. զի մի մոլորիցիմ արտաքոյ հրամանաց փրկչին իմոյ, և գնայցեմ 'ի ճանապարհ խաւարային, մի թողուր զիս ով պահապան հրեշտակ իմ, զի ահա տեսանես ոսոխն մեր սատանայ կամի որսալ զիս, և ձգել զիս 'ի խորս յուսահատութեն, այլ զինորեա զիս զինուք սրբոյ եկեղեցւոյ, զի կարիցեմ ընդդիմամարտիլ ընդդէմ զօրութեանց նր. ամէն։

Ո՜վ հրեշտակ այ որ պահապան իմ ես, զիս քեզ յանձնեցեալս գթութք վերնականաւ լուսաւորեա այսօր, պահպանեա, ուղղեա, և կառավարեա. ամէն.

## Յանձնարարութիւն հոգւոյ ի ձեռս աստուածածնին։

Արդ էն իսկ առողջ և կարող գոլով յանձն առնեմ զիս քեզ Տր, զի մի գուցէ 'ի նուաղելն իմ ոչ կարիցեմ զգաստապէս յանձն առնել քեզ զհոգի. Երկնչիմ 'ի ժամէն յայնմանէ, յորում 'ի մէջ կենդանեաց գոլով, ոչ ճանաչիցեմ զգոյն իմ. ըստ որում տեսի զբազումս, որք առնելով զառողջութիւն շնչոյ և զկեանս, ոչ գիտէին զինքեանս գոլ կենդանիս։

Ով

Ո՛վ յայնմ ժամու յորում հոգին շարժի, և սարսափի 'ի փոփոխմանէ, և յելանելոյ 'ի բանտէ մարմնոյ իւրոյ ընկալցի զնա, եթէ դու ստեղծողդ 'ի բաց մերժիցես։ Ո՛վ համբերող յո՛ յիշեա՛, զի և դու 'ի յերին անձկութեանդ արտասուեցեր, և զքեզ թողեցեալ և լքեցեալ գոլ ամբաստանեցեր, և զհոգիդ քո ամենամաքուր 'ի ձեռն հօր յանձն արարեր, աղաղակեցեր, և ննջեցար։ Ահա՛ ես եւս առ քեզ աղաղակեմ, զի դու փրկիչ իմ ընկալցիս զհոգի իմ, մինչև ողորմեսցես և ճցէ հիւանդութեամբ 'ի մարմնոյ աստի ելանիցէ։ Յիշեա՛ ով բարի յո՛, զի 'ի խաչին զբազուկս քոյս տարածեցեր, զկողս քոյս բացեր, և զգլուխ խոնարհեցուցեր, զիս ահա՛ հոգի իմ լքեցեալ յամենից ստեղծուածոց, զապաւինութիւն խնդրէ, 'ի բազուկս քոյս դիմէ, և 'ի գոգ քո անկանի, ներեա՛ ուրեմն աղաչեմ ողորմելւոյ այսմիկ առ քեզ մերձենալ, և մի անտի 'ի բաց մերժիցես, մինչև անցանիցէ բարկութիւն քո, քանզի անդ աներկեւոնապէս կայցէ, և անդ 'ի սպասաւորացն դժոխոց թագչել կարիցէ։ Արդ 'ի ձեռս քո տէր յանձն առնեմ զհոգի իմ, զոր դու ստեղծեր և նորոգեցեր, մի անտես առներ զստեղծուած քո։ ահա՛

Թողուլ

Թողում զաշխարհ և փութամ առ քեզ գալ, հեռանամ յերկրաւորացս, զի առ քեզ մերձենայցեմ եղանեմ 'ի բնակութէ մարմնոյս, և դիմեմ 'ի բնակարանս հրեշտակաց. ընկալ զիս 'ի յարկս քոյս յաւիտենից. և մի մերժեր զիս յերեսաց քոց. զի դու ես յոյս իմ 'ի մանկութէ իմմէ։ Նայեաց տր 'ի ծառայ քո, զի դու ես տծ փրկիչ իմ, Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ, բաժին իմ տծ յաւիտեան, առաջի քո է ամ ցանկութիւն իմ, և առ քեզ տենչայ հոգի իմ. օգնեա ինձ տծ փրկիչ իմ. և փրկեա զիս վն փառաց անուան քոյ սրբոյ։

---

Ես Մելքիսեթ Վարդապետ կարողութեն և շնորհօքն այ Պատրիարգս Մայրաքաղաքին Կոստանդինուպօլիս տեսի զմնացական աղօթս զայս և հաւանեցայ. զի գտի զսա լի ածային բանիւք յօրինեցեալ. 'ի սրբոց մեծաց վարդապետաց եկեղեցւոյ վն որոյ ետու զհրաման զի տպագրեսցի։

Փառք ամէն երանեալ սբ. երրորդութեն
հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. ամէն.
Կատարեցաւ փոքրիկ գիրքս որ կոչի.
Մատենական աղօթս ըստ եկեղեցւոյ մեծի
հռոմայ 'ի Թվականի մարդեղութեն տն
մերոյ յն քի. ռոհը. Հոկտեմբեր. Ն.
տպարտ եղև 'ի քաղաքն Մարսիլիոյ.

Եւ այս Մատենական աղօթս ես
խոշկաշինեցի Մինասի որդի Յովա
նէսս պատմայարմէն իմն յիշատակ և ծնո
ղաց իմոց և եղբարանաց իմոց ով որ
հանդիպի կամ կարդայ և օրինակե մէկ
հայր մերիւ յիշէ և դուք յիշեալ լիջիք
'ի քէ. և ես տրուպ Գեորգ Վարդա
պետս Թիւլէգեցի զայս Մատենական
աղօթս Թարգմանեցի 'ի Լատին լեզուէ
'ի հայ բարբառ. ով որ կարդայ և շահի
իմքս հոգևորս. յիշեսցէ զիս և զծնօղս
իմ միով հայր մերիւ. և դուք յիշեալ
լիցիք 'ի դարձութեան կենաց.
ամէն.